



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵՆԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՆԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

10 հուլիսի

Լիսվայի արքակարգ եւ լիազոր դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լիսվայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին։
Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակման

առիթով շնորհավորեց դեսպանին եւ արդյունավետ գործունեություն մաղթեց նրան Հայաստանում պաշտոնավարելու ընթացքում։
Չրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ ՀՀ-ում Լիսվայի դեսպանն անդրադարձան երկու ժողովուրդների բարեկամա-

կան կապերին, պետությունների դիվանագիտական հարաբերություններին ու ընդլայնվող համագործակցությանը՝ դրանում կարեւորելով նաեւ Լիսվայի հայկական համայնքի դերը։
Մասնավոր անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու եւ քույր Եկեղեցիների հարաբերություններին։

12 հուլիսի

Ավստրիացի ուխտավորների



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ Ավստրիայի Կաթո-

լիկ Եկեղեցու Գուրկի թեմի առաջնորդ Ալոյս Եպս Ծվարցի։
Ողջունելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ

նման այցելությունները նպաստում են ոչ միայն փոխանաչություններ, այլեւ երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացմանն ու մշակույթների հարստացմանը։ Նորին Սրբությունն իր խոսքում կարեւորեց ուխտագնացությունների դերը քրիստոնյայի կյանքում՝ ընդգծելով, որ դրանք առիթ են ստեղծում միասնաբար աղոթք բարձրացնելու առ Աստված՝ ժողովուրդների բարօրության, աշխարհի խաղաղության եւ Զրիստոսի Եկեղեցու առաքելության արդյունավորման համար։

Անդրադառնալով Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների սերտ հարաբերություններին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես իր շնորհակալությունը հայտնեց Ավ-

ստրիայի կարդինալ Շոնբոռնին՝ այն աջակցության համար, որի շնորհիվ Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորները հնարավորություն են ստանում իրենց ուսումը շարունակելու Ավստրիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմությանը, հասարակական կյանքում Եկեղեցու դերակատարությանը եւ Մայր Աթոռի հոգեւորկրթական ծրագրերին ու գործունեությանը։

Հանդիպմանը ներկա էր նաեւ Ավստրիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը։

Ռումինիայի մշակույթի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռումինիայի մշակույթի նախարար Դանիել Կոնստանդին Բաբուլին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի եւ Ռումինիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Համլետ Գասպարյանի։

Չրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ Ռումինիայի հետ հարաբերությունները սերտ են եւ չեւր՝ համահունչ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը։ Նորին Սրբությունը կարեւորեց երկու նախարարությունների միջեւ համագործակցությունը՝ ավելացնելով, որ Ռումինիայում հայ ժողովրդի դարա-

վոր պատմություն ունեցող մշակութային ներկայությունը եւ հարուստ ժառանգությունը կարեւոր կամուրջ են երկու ժողովուրդների միջեւ։

Վեհափառ Հայրապետը եւ Ռումինիայի մշակույթի նախարարը գրուցեցին նաեւ երկու ժողովուրդների հոգեւոր կյանքից, Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական կապերից։ Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը վերհիշեց իր հովվապետական այցերը Ռումինիա, հանդիպումները Դանիել Պատրիարքի եւ երջանկահիշատակ Թեոկտիստ Պատրիարքի հետ, նաեւ գոհունակությամբ անդրադարձավ ռումին ժողովրդի քրիստոնեական հավատի խոր ապրումին։



Հանդիպման ավարտին հաջողություն մաղթելով հայ-ռումինական մշակութային գործակցությանը՝ Ամենայն Հայոց Հայ-

րապետը հորդորեց առավել զորացնել երկու ժողովուրդների դարերով փորձված բարեկամությունը։

Հայ-ռումինական գործարար համաժողովի մասնակիցներին

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանում անցկացվող հայ-ռումինական գործարար համաժողովի մասնակիցներին։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հայ եւ ռումին գործարարներին, կարեւորեց նման համաժողովների անցկացումը՝ նշելով, որ դրանք ոչ միայն ավելի են ամրապն-

դում երկու ժողովուրդների բազմադարյա հարաբերությունները, այլեւ գործնականում նպաստում են երկրների միջեւ տնտեսական կապերի աշխուժացմանը եւ արդյունավետ համագործակցության հաստատմանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում ընդգծեց Ռումինիայի հայ համայնքի եւ հայոց

թեմի դերակատարությունը երկու ժողովուրդների բարեկամության գորացման գործում՝ գոհունակություն հայտնելով նաեւ Ռումինիայի կյանքի տարբեր ոլորտներում հայորդիների բերած կարեւոր ներդրումի համար։

Անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղա-

փառ Եկեղեցիների ջերմ հարաբերություններին, հովվապետերի փոխադարձ եղբայրական այցերին։

Վերջում Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով համաժողովի մասնակիցներին, հաջողություններ մաղթեց նրանց օգտաշատ նախաձեռնությանը՝ ի բարօրություն երկու երկրների։

**Միջխորհրդարանական
ուղղափառության
վեհաժողովի
գերագույն
ասամբլեան Աթենքում**

Հունիսի 26-ից հուլիսի 1-ը Աթենքում տեղի ունեցավ Միջխորհրդարանական ուղղափառության վեհաժողովի գերագույն ասամբլեան՝ «Խորհրդարանական ժողովրդավարություն-քրիստոնեություն-ուղղափառություն. արժեքներ եւ նշանակություններ» խորագրով։ Ասամբլեան նվիրված էր վեհաժողովի հիմնադրաման 20-ամյակին։

Վեհաժողովի 20-ամյակի հանդիսավոր արարողությանն ընթերցվեց Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ-ի ուղերձը՝ ուղղված Միջխորհրդարանական ուղղափառության վեհաժողովի անդամներին։

«Ուրախություն է Մեզ համար Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի հոբելյանական՝ 20-ամյակի առիթով արդյունավետ աշխատանքի բարեմաղթանքներով հայրապետական մեր օրհնությունները հղել Ձեզ հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից։ Գոհունակություն էր Մեզ համար դեռեւս 2010 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի մասնակիցներին, որ ծանոթանալ կազմակերպության հետ, որն ստեղծվեց մեր ժողովուրդների համար վճռորոշ ժամանակներում, երբ Արեւելյան Եվրոպայի շատ երկրներ թողափեցին աստվածամերձ ռեժիմները եւ հիմքերը դրեցին ազատ եւ ժողովրդավար պետությունների կառուցման։ Հոգու բերկրանքով ենք անդրադառնում, որ պատմական այս ժամանակաշրջանում ստեղծված Ուղղափառության միջխորհրդարանական կառույցն այսօր քսանհինգ եւ ավելի անդամներ ունի եւ լինելով արեւելյան քրիստոնական արժեքների կրողը՝ մեր Եկեղեցիների հավատավոր զավակների միջոցով ծառայում են նպաստ Է բերում մարդկության եւ մեր ժողովուրդների առջեւ ծառացած եւ համաշխարհային հանրությանը հուզող ժամանակի մարտահրավերների հաղթահարմանը։

Քրիստոնեական աշխարհն իր ծանրակշիռ ներդրումն է ունեցել համաշխարհային քաղաքակրթության զարգացման եւ համամարդկային արժեքային համակարգի ստեղծման գործում։ Հայաստանը, որն առաջինն է քրիստոնեությունը հռչակել որպէս պետական կրոն, իր հինավուրց Առաքելական Սուրբ Եկեղեցիով այսօր էլ հավատարիմ մնալով հանդուրժողականության եւ համերաշխության գաղափարներին, պատրաստակամ է միջեկեղեցական եւ միջկրոնական ամենալայն երկխոսության ու համատեղ աշխատանքի՝ ի նպաստ խաղաղության եւ ժողովուրդների ու ազգերի բարօրության։

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի Նորքնաթիռ նախագահին

Հունիսի 11-ին Ն. Ս. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից շնորհավորական գիր է հղել Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի նախագահ ընտրվելու առիթով:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական նամակում մասնավորապես ասված է. «...Ձեր ընտրությունը՝ որպես Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի նախագահ, մի նոր իրեղեն առիթ է, որպեսզի Ձեր այս նոր հանգամանքում շարունակեք

կեք ծառայել Քրիստոսի Եկեղեցուն՝ նպաստելով նաեւ Հայ եւ Անգլիկան Եկեղեցիների եղբայրությանը:

Լիախույս ենք, որ Ձեր հարուստ փորձառությունը ներդնելու եք ավելի զորացնելու ԵԵԿ եւ նրա գործունեությունը՝ առավել արդյունավետ ծառայելու Եվրոպայի Եկեղեցիներին՝ նպաստելով Եկեղեցիների եւ տարբեր հասարակական ու պետական հաստատությունների երկխոսությանը, մարդկային խաղաղ եւ բարձր կյանքի կերտմանը Եվրոպայում եւ ողջ աշխարհում»:

Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարը Բուդապեշտում



Հունիսի 3-ին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում սկսվեց Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարը, որի ընթացքում քննարկվեցին Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի վերակազմավորման նպատակով ստեղծված «Ուփսալայի» փաստաթուղթը, կատարվեցին փոփոխություններ կոնֆերանսի սահմանադրության եւ կանոնադրությունների մեջ, ընտրվեց կառույցի ապագա ղեկավար մարմինը, եւ առաջիկա տարիների համար որոշվեցին կոնֆերանսի գործունեության գերակա ուղղությունները:

Համագումարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մասնակցում էր հինգ հոգիանոց պատվիրակությամբ, որի կազմում էին Տավուշի թեմի առաջնորդ, հայաստանյան Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը, Արթիկի թեմի առաջնորդ, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հովակիմ եպս Մանուկյանը, Հարավային Ֆրանսիայի առաջնորդական փոխանորդ Մեսրոպ վրդ. Պարսամյանը, Միլանի եւ Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ Թովմա աբեղա Խաչատրյանը, Թեսաղոնիկեի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դոկտորանտ, պատմական գիտությունների թեկնածու Մարիաննա Ապրեսյանը:

Բուդապեշտի Ռեֆորմական եկեղեցում տեղի ունեցավ համագումարի բացման արարողությունը, ապա համագումարի պլենար նիստը, որի ընթացքում Հովակիմ եպս Մանուկյանը ներկաներին փոխանցեց Ն. Ս. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի ուղերձը: Հայրապետական ուղերձում մասնավորապես ասված է. «Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի այս համագումարը կարելու է իրադարձություն է Էկումենիկ շարժման եւ հատկապես կոնֆերանսին անդամակցող Եկեղեցիների համար՝ հնարավորություն ընձեռելով անդրադառնալու Եկեղեցիների համագործակցության անցած ճանապարհին, կոնֆերանսի վերջին տարիների գործունեությանը եւ ձեռքբերումներին, ինչպես եւ՝ այսօր Եկեղեցիների եւ ողջ մարդկության առջեւ ծառացող հրամայականներին եւ փնտրելու Եկեղեցիների

հարաբերությունների զորացման ուղիներ՝ առավել արդյունավորելու համար տերունապատվեր մեր առաքելությունը՝ հանուն Աստծո փառքի եւ Տիրոջ կենարար Ավետարանի քարոզչության: Այս համախմբումը բարեպատեհ առիթ է նաեւ միասին աղոթք վերառաքելու առ Բարձրյալն Աստված համայն

մարդկության բարօրության, խաղաղության ու բարեկամության, նաեւ՝ Եկեղեցիների եղբայրական արգասալի համագործակցության համար:

Ողջունելի է, որ Եվրոպական Եկեղեցիների ներկա համագումարը նպատակ ունի նաեւ վերակազմավորելու կոնֆերանսի կառույցը՝ հաշվի առնելով Եկեղեցու եւ Էկումենիկ շարժման առջեւ մեր օրերում բարձրացող մարտահրավերները: Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսը տասնամյակների հարուստ փորձառություն ունի՝ Եկեղեցիների համագործակցության միջոցով ծառայելու մարդկության խաղաղ ու բարձր կյանքի կերտմանը, Եվրոպայում եւ ողջ աշխարհում հոգեւոր արժեքների ամրապնդմամբ՝ հաշտության եւ արդարության հաստատմանը:

Մենք խիստ մտահոգված ենք Սիրիայում արդեն երրորդ տարին շարունակվող հակամարտությամբ, որի արդյունքում հազարավոր մարդիկ կորցրեցին իրենց կյանքը, ունեցվածքը եւ հարազատներին: Բոլոր ջանքերը պետք է ներդրվեն օր առաջ արյունահեղության դադարեցման եւ խաղաղության հաստատման նպատակով...

Մեր ժողովրդի իղձերն ու ցանկությունները չեն տարբերվում աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների ցանկություններից եւ նպատակներից: Մենք կարիք ունենք այնպիսի աշխարհի, որտեղ չկան պատերազմներ, մարդկային տառապանք, անարդարություն, մարդու իրավունքների ոտնահարում, բնության չարաշահում, սոցիալ-տնտեսական ճգնաժամեր: Մենք կարիք ունենք աշխարհի, որտեղ քաղաքականությունն առաջնորդվում է արդարության ու ճշմարտության սկզբունքներով եւ ոչ աշխարհաքաղաքական նեղ շահերի եւ նյութական հետաքրքրությունների առաջնայնությամբ: 2015 թ. մեր ժողովուրդը Հայաստանում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում եւ աշխարհի բազում երկրներում հիշատակելու է 1915 թ. Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության հարյուրամյակը՝ միաժամանակ իր բողոքի ձայնը բարձրացնելով մարդկության հանդեպ կատարված հանցագործությունների դատապարտման գործընթացում դրսևորվող մերժողականության դեմ:

Շարունակությունը՝ էջ 3

«Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Հունիսի 12-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն. Ս. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը: Հայոց Եկեղեցու հաստատած մրցանակն այս տարի շնորհվեց մեծանուն կինոռեժիսոր Արտավազ Փելեշյանին:


Կինոփառատոնի մասնակիցներին եւ հյուրերին ողջունեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեորգ եպս Սարոյանը: Այնուհետեւ շնորհակալական

ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Արտավազ Փելեշյանին՝ հոգեւոր, մշակութային ու մարդասիրական արժեքների քարոզչության եւ համաշխարհային կինոարվեստում մեծ վաստակի համար:

Մրցանակաբաշխությունից հետո ներկաների հետ իր զգացումները կիսեց Ա. Փելեշյանը, ով իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իրեն նման բարձր պատվի արժանացնելու համար:

Արարողության ավարտին ներկաներին իր հայրապետական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գոհունակությամբ անդրադառնալով շնորհալի կինոռեժիսորի ստեղծագործական գործունեությանը՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Տիար Փելեշյանը ռեժիսոր-վավերագրողի իր գործերով, բարձր

արժեք վավերագրական ֆիլմերով բազմաթիվ մարդկանց հոգիներում զորացրել է ձգտումը դեպի բարին ու արդարը, վեր հանել մարդկային ներաշխարհի հույզերը, կամքի ուժը եւ ստեղծագործական թռիչքը, ներկայացրել Աստծո արարչագործության պսակ մարդ արարածին իր ողջ վեհությանը, տքնելու ու կերտելու գործությանը, ամրապնդել նաեւ մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, իր ուրույն տեսանկյունով ներկայացրել հայ ժողովրդին»: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ մեր ժողովրդի համար հպարտություն է այսպիսի զավակ ունենալը, ով համաշխարհային կինոյի ասպարեզում համարվում է մեծագույն գործիչ եւ կինեմատոգրաֆիայի դասական, ում նշանավոր գործերը համարողկային նշանակություն ունեն եւ նույնիսկ մեր ժողովրդի մասին պատմող գործերը դուրս են գալիս նեղ սահմաններից, ազգային միջոցով ներամփոփում ու տարածում համամարդկայինը: Վերստին շնորհավորելով տիար Փելեշյանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը քաջառողջություն, արեւատություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ մաղթեց մեծարյալին:



խոսքով հանդես եկավ կինոփառատոնի հիմնադիր-տնօրեն Հարություն Խաչատրյանը, ով շնորհավորեց մեծարյալ արվեստագետին՝ Հայ Եկեղեցու մրցանակին արժանանալու կապակցությամբ:

Ապա Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանն ընթերցեց հայրապետական վկայագիրը, որից հետո ներկաների ծափողջույնների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը «Եղիցի լույս» մրցանակը շնորհեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,

Միջխորհրդարանական ուղղափառության վեհաժողովի գերագույն ասամբլեան Աթենքում

Սկիզբը՝ էջ 1

Ուրախությամբ ենք անդրադառնում, որ Հայաստանի Հանրապետությունը եւ Հայ Առաքելական Եկեղեցին ակտիվ մասնակցություն ունեն միջազգային խաղաղարար կազմակերպությունների աշխատանքներում: Կարելու է նաեւ համագործակցությունն Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի շրջանակներում, որի ապացույցն է վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակության արդյունավետ գործունեությունը: Լիախույս ենք, որ խորհրդարանական դիվանագիտությունը ժամանակակից կնճռոտ խնդիրները փակուղուց դուրս բերելու առավել արդյունավետ ուղի է, եւ այդ գործում կարելու է նաեւ Ձեր կազմակերպության դերը: Վեհաժողովը գործունեություն է ծավալում աշխարհի չորս կողմերում եւ տարբեր միջոցառումների ու նախաձեռնությունների իրագործման միջոցով փորձում նպաստել ժողովուրդների փոխհարաբերությունների բարելավմանը, գոյություն ունեցող տարաձայնությունների հաղթահարմանը եւ մարդկության կյանքում վճռորոշ դեր ունեցող քաղաքական ու կրոնական հոսանքների միջեւ համագործակցության զարգացմանը: Այս առթիվ գնահատանքով ենք անդրադառնում Միջխորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված «Տարածաշրջանում քրիստոնեական հոգեւոր եւ մշակութային հուշարձանների պահպանման ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» եւ «Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների եւ ասորիների նկատմամբ իրականացված ցեղասպանության վերաբերյալ» բանաձեռներին, որոնցով վեհաժողովը վկայեց համամարդկային արժեքների հավատարմի պաշտպանի իր կոչումը: Վստահ ենք, որ ունենալով երկու տասնամյակների հարուստ փորձառություն՝ Միջխորհրդարանական վեհաժողովն իր հետագա գործունեությամբ կշարունակի զգալի ներդրում ունենալ խաղաղության ամրապնդման, միջկրոնական տարածայնությունների հարթման, մշակութային եւ հոգեւոր համագործակցության ոլորտներում արդյունավետ միջոցներ գտնելու գործում. «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ, որ հաշտեցուցն զմեզ ընդ Իւր ի ձեռն Քրիստոսի, եւ ետ մեզ զպաշտօնն հաշտութեան» (Բ Կոր. 5. 18):

Առ Աստված աղոթքով Տիրոջ գորակցությունն ենք հայցում Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի մասնակիցներին, մաղթում արդյունավոր աշխատանք՝ հանուն աշխարհում խաղաղության ու ապահովության հաստատման եւ քրիստոնեական արժեքների տարածման:

Այլեւ հայցում ենք, որ Տերն անշրջելի առաջընթաց ու բարգավաճում պարգևի Ձեր երկրներին ու աստվածասեր Ձեր ժողովուրդներին»:

Վեհաժողովին Մայր Աթոռ Սբ Էջմիածնից մասնակցում էր Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արք. Պետրոսյանը:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԴԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-12

Սիմեոնը նամակ ուղարկեց ամբողջ հայոց ազգին՝ սահմանելով, որ Լուսավորչի տոնը ոչ թե մեկ օր նշվի, այլ տարվա մեջ հինգ օր փառավորվի հայոց քրիստոնեացման հիշատակը, որոնք են՝ Սբ Լուսավորչի մուտքը Խորվիրապ՝ Մեծ պահքի հինգերորդ շաբաթ օրը, Վիրապից դուրս գալը՝ Հոգեգալստյան առաջին շաբաթ օրը, Նշխարների գյուտը՝ Հոգեգալստյան երրորդ շաբաթ օրը, Թաղեսիի եւ Սանդուխտի տոնը՝ Վարդավառի առաջին շաբաթ օրը, եւ առաջին լուսավորիչների՝ Թաղեսիի եւ Բարթողիմեոսի տոնը։ Այդ ընդհանրական թուղթը հավանաբար գրվել է 1766 թվի ապրիլից առաջ, քանի որ դրանից հետո են հիշվում Կ. Պոլիս հասած նամակները Տիրոջ հրաշափառ Հարության օրը՝ սուրբ Չատկին, որն այդ տարի ընկնում էր ապրիլի 23-ին։

Սրանք տոնացույցի մեջ փոփոխություն մտցնելու առաջին նախափորձերն էին, որոնք վերջնական ու պաշտոնական կերպարանք ստացան տոնացույցի ամբողջական հրատարակությունից հետո։ Կ. Պոլսի հայ հասարակությունը Նշխարաց գյուտը պահեց, սակայն մյուս չորս օրերը չպահեց։ Դա են հաստատում Կ. Պոլսում հրատարակված օրացույցները, որոնց մեջ միայն առաջին անգամ երեւացին տոնական խաչանիշները՝ Վիրապից դուրս գալը եւ Առաջին լուսավորիչների օրերը, որոնցից առաջինը խափանվեց 1878 թվից հետո, իսկ Գյուտ Նշխարաց օրերի վրա միայն Առաջին լուսավորիչների տոնն ավելացվեց։ Օրերի փոփոխությունը հնա-

րավոր եղավ գործադրել միայն նոր տոնացույցի տպագրությունից հետո եւ այն էլ՝ մեծ բարդություններով։ Սակայն այդ մասին՝ ավելի ուշ։

Սիմեոն կաթողիկոսն զբաղվեց նաեւ առաջնորդությունների խնդրով։ Նա ցավով նկատել էր, որ շատ առաջնորդներ Էջմիածնում աստիճան եւ պաշտոն ստանալուց հետո, վերադառնալով իրենց վայրերը, օտարանում են նրանից։ Ոմանք պարզապես ըմբոստանում են, ինչպես Կարսի Աբրահամ եպիսկոպոսը, մյուսները հեռանում են դավանությունից, ինչպես Ախալցխայի Գեորգը, ուստի որպես նախագուշական միջոց՝ անհրաժեշտ համարեց եպիսկոպոս ձեռնադրվածներից հատուկ ուխտագիր պահանջել՝ նրանց ապագա գործունեության համար։ Դրա առաջին գործադրումը եղավ 1765 թվի ապրիլի 3-ին՝ Չատկի օրը, երբ եպիսկոպոս ձեռնադրվեցին Կարսի առաջնորդ Բաղդասարը, Բասենի առաջնորդ Ավետիքը, ինչպես նաեւ՝ Մայր Աթոռի միաբան Գրիգոր Սանահինեցին։ Ուխտագրում ասվում էր, որ ձեռնադրվողը մինչեւ մահը պետք է անվերապահորեն հավատարիմ մնա վանքին, որը նրան ձեռնադրել է, եւ Հայոց Եկեղեցու դավանությանը, հոգատարությամբ վարվի Սբ Աթոռի եւ նրա գործակալների նկատմամբ, եւ որ ոչ մեկը չի կարող գործել առանց ընտրության եւ չի կարող ձեռնադրվել՝ առանց գլխավոր մեծամեծների, քահանաների ու ժողովրդի հավանության ու կամքի։ Իսկ վիճակից դուրս գտնվելիս կամ էլ այլ վիճակից իր մոտ եկած ժամանակ չէր կարելի առաջին աստիճանից

մինչեւ յոթերորդ աստիճանը կարգ տալ։ Կարգ չէր կարող ստանալ այն հոգեւորականը, որ հանձն չէր առնում մտնել վանքի միաբանություն եւ հնազանդվել նրան։ Ովքեր հանձն էին առնում ուխտագիրը եւ չէին պահպանում այն, վեհափառի կողմից ենթարկվում էին հոգեւոր պատժի եւ տեղի իշխանավորին վճարում էին 2000 դուրուշ տուգանք, որտեղ էլ որ գտնվեին։ Այդ կարգն արձանագրվեց հաջորդների համար։ Կար հատուկ սովորություն՝ գալ կաթողիկոսին այցի, հատկապես երբ նա գահակալության էր անցնում։ Եվ երբ Կարսի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսը չուզեց գալ, Սիմեոնը կամեցավ բանադրել նրան, սակայն վերջինս զոջաց ու եկավ։ Հետագայում այդ կարգը շատ կոդմերով մոռացվեց։

Շամախեցու օրոք եւ Երեւանցու հովվապետության առաջին տարիներին Սուրմ գահակալում էր Գաբրիելը, որը 1758 թվին հաջորդել էր իր եղբորը՝ Միքայել Աջապահյանին։ Գաբրիելը չփորձեց անգամ շարունակել Միքայելի քաղաքականությունը՝ ընդարձակել իր իրավասության շրջանակներն Էջմիածնի վիճակների հաշվին, առավել եւս, որ Միքայելը կամենում էր բոլոր թուրքահայերի կաթողիկոս հռչակվել։ Սակայն Կ. Պոլսի մեծամեծները նրա այդ գիծը չպաշտպանեցին եւ նույնիսկ արքունական հրովարտակով նրան հանեցին Էջմիածնի վիճակից։ Դրա համար Երեւանցին այդ հարցում Կ. Պոլսի մեծավորներին օրինյալ իշխաններ է անվանում։ Եթե չհաշվենք Կ. Պոլսի մեծավորների ու հոգեւորականների՝ Ջահկեցու դեմ հանդես գալը, ապա նրանք երբեք չփորձեցին մրցակցել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հետ ու բնավ չպաշտպանեցին Սսի աթոռի նկրտումները։

Գաբրիելը Միքայելի ճիգերը կրկնել չկամեցավ, եւ հաշտ հարաբերություններ հաստատվեցին, որոնք շարունակվեցին բավական երկար։ Գաբրիելն առանձին գործունեությամբ աչքի չընկավ, որը շատ բանով բացատրվում էր Կոզանօղլուների



բռնապետության առկայությամբ։ Նա ի վերջո գոհվեց վանք ներխուժած լեռնականների ձեռքով՝ 1770 թվի սեպտեմբերի 10-ին՝ հաջի շաբաթապահի ուրբաթ օրը։ Հաջորդ օրը վանքում մնացածները նրան հողին հանձնեցին, եւ կրկին հարձակում եղավ Սսի վանքի վրա։ Միաբաններից շատերին խոշտանգեցին՝ զանազան պահանջներ ներկայացնելով։ Տասն օր անց հարձակումը կրկնվեց՝ վանքը կողոպտելու ու միաբաններին կոտորելու համար։ Իսկ երբ միաբաններն իրենց մահն անխուսափելի էին համարում, հարձակվողների առաջնորդները կասեցնում են իրենց գործողությունները, եւ միաբանների մի մասը կարողանում է հեռանալ ու ապաստան գտնել Ադանայում՝ Մարկոս քահանա Աջապահի գլխավորությամբ, որը վերջին երեք կաթողիկոսների եղբայրն էր։ Նրա հետ էր որդին՝ Եփրեմ եպիսկոպոսը։ Այս Եփրեմ Աջապահն էր, որ 1771 թվի սկզբներին վերադարձավ Սիս եւ կաթողիկոս օծվեց։ Երբեմն նրա գահակալությունը դնում են 1772 թվին։ Եփրեմը կազմել է իր ազգաբանությունը, սակայն թվականներ չի նշել։

Շարունակությունը՝ էջ 4

Կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների համագումար Շաղկաձորում



Հունիսի 23-29-ը Շաղկաձորի գրողների տանը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը World Vision միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ անցկացրեց կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների համագումար՝ վերապատրաստման ձեւաչափով։ Համագումարին մասնակցում էր հայաստանյան բոլոր թեմերից շուրջ 170 ուսուցիչ։ Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի ԶԴԿ տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանը, ապա խոսք ասացին World Vision միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի կառավարության ու Եկեղեցու հետ կապերի պատասխանատու Կարինե Հարությունյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Զարամյա-

նը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարինե Աճեմյանը, ԿԳՆ ԿԿԻ փոխտնօրեններ Անահիտ Բախչյանն ու Վարդան Ղանդուկյանը։ Դասընթացի օրակարգում ընդգրկված էին Աստվածաշնչի ամենօրյա սերտողություններ, Եկեղեցու պատմության, Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանության, ծիսական համակարգի, Սուրբ Գրքի եւ Եկեղեցաբանական տարաբնույթ հարցերի վերաբերյալ դասախոսություններ, որոնք ներկայացվեցին ինչպես հոգեւորականներին, այնպես էլ աշխարհական մասնագետ բանախոսների կողմից։

Ծրագրի շրջանակներում առաջին անգամ ուխտագնացություն կազմակերպվեց դեպի Հրազդանի Ս. Աստվածածին Եկեղեցի (Մաքրավանք), ինչպես նաեւ տեղի ունեցան խմբային աշխատանքներ ու մեթոդաբանական քննարկումներ։

Համագումարի ընթացքում համերգային ծրագրով հանդես եկավ ԱՅԹ «Արարատ» հոգեւոր միությունը։



Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարը Բուդապեշտում

Սկիզբը՝ էջ 2

Մեր ժողովրդի սպասումն է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կգտնի խաղաղ հանգուցալուծում՝ տեղի հայության ինքնորոշման արդար իրավունքի ճանաչմամբ, որը կնպաստի տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը։ Հակառակ այս սպասումների՝ վերջերս էր, որ ականատեսը եղանք արտառոց եւ պախարակելի մի փաստի։ Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացներին մասնակցող եւ նույն առաքելությամբ այնտեղ գտնվող հայ սպային քնած ժամանակ կացնահարած ու ցմահ ազատագրված դատապարտված Ռամիլ Սաֆարովը Հունգարիայի եւ Ադրբեջանի գործարքի արդյունքում հանձնվեց Ադրբեջանին։ Իր հայրենիքում մարդասպանն արդարացվեց եւ հերոսացվեց։ Սա, իհարկե, դատապարտվեց առաջադեմ երկրների, միջազգային կառույցների ղեկավարների եւ հոգեւոր առաջնորդների, այդ թվում՝ Հունգարիայի Եկեղեցիների կողմից։ Հայ Առաքելական Եկեղեցին նախանձախնդիր է առավելագույն իր ներդրումը բերելու Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի այն առաքելությանը, որը միտված կլինի նպաստելու այսպիսի մարտահրավերների հաղթահարմանը։ Մեզ համար ուրախալի կլինի տեսնել Եվրոպական Եկեղեցիների այն կոնֆերանսը, որտեղ ընթացող Եկեղեցիների երկխոսությունը եւ ներդրված միասնական ջանքերը

կնպաստեն աշխարհիկացնող մեր իրականության մեջ կրոնի հասարակական դերի բարձրացմանը, հոգեւոր արժեքների ամրապնդմանը, կրոնական ազատությունների հարգմանը եւ աշխարհում բռնությունների, հակասությունների ու հակամարտությունների հաղթահարմանը»։

Հունիսի 8-ին, համագումարի շրջանակներում, առավոտյան ժամերգությունը կատարվեց հայկական ծեսով։

Հունիս 8-ին իր աշխատանքներն ավարտեց ԵԵԿ 14-րդ համագումարը։ Համագումարի ընթացքում ընդունվեց ԵԵԿ նոր կանոնադրությունը, անդրադարձ կատարվեց Եվրոպայում ֆինանսական ճգնաժամին, Եվրոպական սոցիալական խառնուրդին, Մերձավոր Արեւելքում՝ հատկապես Սիրիայում եւ Եգիպտոսում տիրող իրավիճակին, ինչպես նաեւ Թուրքիայում եւ Հյուսիսային Կիպրոսում կրոնական ազատությունների հիմնախնդիրներին։

Համագումարն ընտրեց Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի ղեկավար մարմին, որի կազմում որպես Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ներկայացուցիչ ընտրվեց Տավուշի թեմի առաջնորդ, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը։

Ժողովի ընթացքում Հայ Եկեղեցու պատվիրակներն ակտիվորեն մասնակցեցին զանազան հանձնախմբերի աշխատանքներին։


Մայր Աթոռում ստեղծվել է Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում ստեղծվել է Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակ։

Հունիսի 10-ից հայրապետական տնօրինությամբ Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն է նշանակվել Բագրատ եպս Գալստանյանը։

Լրատվական նյութերը՝

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



ԱՐՁԱԿ

Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-12

Մեր օրերում իրեն զգալ տվող «բանասիրական» գրականությանը, որը գրագետ եւ անկյանը հորինվածքներից այն կողմ չի անցնում, Մաթեոսյանը հակադրում է կենսական լիցքերով հարուստ, հյուսիս ու վարար մի արվեստ՝ դրանով իսկ հիմնահատակ ավերելով կյանքի սխեմատիկ պատկերացումները:

Վ. Պետրոսյանի արձակը բնութագրվում է ժամանակակից կյանքին ուղղված հարցադրումներով, որոնք երբեմն ունեն նաեւ չթաքցված հրապարակագրական լիցք: Դա նկատելի է Նրա պատմվածքներում ու նորավեպերում, «Քաղաքի կիսաբաց լուսամուտները» (1964), «Ապրած եւ չապրած տարիներ» (1970), «Վերջին ուսուցիչը» (1980) վիպակներում, «Հայկական Եսթիզներ» (1969-1984) խորհրդածություններում եւ «Մենավոր ընկուզենի» (1981), «Կրակե շապիկ» (1987) վեպերում: Եթե ժամանակակից իրականությունը Պետրոսյանի վիպակներում, որոնցում պատկերված է երիտասարդության կյանքը, երեւում է հիմնականում իր գաղափարական հարցադրումներով, առանց գեղարվեստական լուրջ թափանցումների, ապա կենսական վիճակների աստիճանական յուրացումն արդեն որակական զգալի հասունության է հասնում մյուս գործերում: «Դեղատուն» (ԱՄԻ) վիպակի հերոսների մեջ հասունացող՝ Ռ՞վ եւք մենք, Ի՞նչ եւք ուզում իրարից, այս աշխարհից»

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

հարցն իր պատասխանը գտնում է «Ապրած եւ չապրած տարիներ» վիպակում, որի հերոսը՝ լրագրող Լեւոն Շահինյանը, ավելի լուրջ ու տառապազին հայացքով է նայում կյանքին: Իսկ նախորդ վիպակների պատանի հերոսները, որոնք աստիճանաբար ինքնագիտակցության եւ գալիս, դեռեւս ունակ չեն պատասխանելու իրենց իսկ մտատանջող հարցին:

Լեւոն Շահինյանի եւ արտաքին աշխարհի կապը հարաբերությունների մի քանի եզր ունի՝ կապված խմբագրության աշխատանքի, հիվանդ եղբոր, դպրոցական ընկերների եւ սիրած աղջկա հետ: Այդ ոլորտում էլ ձեւավորվում են նրա վարքագիծն ու մտածելակերպը: Ռ՞վ է նա. մի սերնդի ներկայացուցիչ, որն իր մեջ մարել է 1937-ի եւ պատերազմի արձագանքները, որը ներքաշված ինքն իր մեջ, բայց եւ կյանքի առանձին փաստերի իմացությամբ փորձում է վերլուծել նույն այդ կյանքը եւ հասկանալ այն, որը նրա համար նշանակում է լուծել «բազմաթիվ անհայտներով մի հավասարում»: Լուծում պահանջող հարցերը կուտակվում են իրար վրա. ինչո՞ւ իրենց սպանեցին գյուղական երկու անմեղ երիտասարդները, ինչո՞ւ են նրանց այդ արարքը ընկելիս անտեսում հոգեբանական բնույթի շատ նրբին գործոններ եւ սոսկ կանոնագրքերի օրենքներով փորձում մեկնաբանել կատարվածը: Եղբայրը մեռավ, եղբայրը իրեն հաշվապահ էր համարում, բայց հանկարծ նրա հաշվապահական թղթերի մեջ Լեւոնը բանաստեղծություններ է գտնում եւ կյանքի վերաբերյալ արված դատողություններ ու գրառումներ. ինչո՞ւ էր եղբայրը թաքցնում այդ ամենը: Հերոսի ապրած ու չապրած տարիների զգացողությունն ստեղծում է հոգեբանական վիճակների մի համակցություն, որի բաղադրիչներն են ներամիտիվածությունը, մենությունը, կյանքի ներքին ազդակների մասին ոչ բարձրաձայն, այլ ինքն իր մեջ խոսելու, լռությունն իմաստավորելու, ներքին մենախոսության անցնելու բնավորության գիծը, մասնակի դժգոհությունը շրջապատից եւ օտարումը՝ կյանքի մակերեսը, փրփուրը կազմող մարդկանցից ու հարաբերություններից:

Պատմվածքներում եւ նորավեպերում սովորական թվացող դեպքերի ու պահերի մեջ հեղինակը գտնում է կյանքի թաքնված հոգեբանական դրամայի որոշ պատկերներ: Մի կողմից ներկայացվում են հերոսներ, որոնք կողոպտում են իրենց անցյալը եւ փորձում իմաստ գտնել արդեն ապրած տարիների մեջ («Եթե երկինքը կապույտ լիներ»), իսկ մյուս կողմից՝ պատկերվում հերոսներ, որոնք տքնում են իմաստավորել իրենց ներկան, որպեսզի հետագայում «թալանելու» անցյալ ունենան («Անցած տարվա ծաղիկները»): Վերջին պատմվածքի հերոսը ձանձրացել է ամենօրյա պարտականություններից, կյանքի կայունացումը նրա համար համարժեք է մահվան, նրան միշտ պետք են անորոշն ու նորը: Իսկ կյանքն ունի իր շրջագիծը, եւ ամենօրյա կարուսելը նույն այդ հերոսին վերստին ստիպում է քրքրել անցյալը: «Մի երկար գիշեր եւ մի կարճ առավոտ» պատմվածքն ապրած տարիների կարոտի կանչ է. հանդիպում կամ վերհիշում ես դիմացինիդ, որի մեջ կա քո կյանքի մի մասը, որի մեջ դու մնացել ես կյանքի որեւէ տարիքում եւ հիմա կյանքիդ կորցրած ընկերոջ մեջ, ժամանակային անցած մի հատվածի վերհիշումով հանդիպելով ինքդ քեզ, վերագտնելով քո կենսագրության մի մասը, տխրում ես, փիլիսոփայում ու դառնում նաեւ ինչ-որ չափով զգացմունքային: Ու ձեւավորվում է հաշորդ պատմվածքը. «Ինչու են շուտ մեռնում ծաղիկները», որի մեջ նախորդ պատմվածքի հոգեբանական վիճակը շարունակվում է նոր կողմերով. ամեն մարդ հոգու մեջ ունի իր աշխարհը, ո՞չ այն, որ ապրում է բոլորի աչքի առաջ, այլ մեկ ուրիշը, որը միայն իրենն է, եւ որի համար ինքն իրեն պատասխանատու է ամբողջ եւթյամբ: Ինչո՞ւ են շուտ մեռնում ծաղիկները՝ պատասխանել պետք է որոնել ունեցած կորուստների մեջ, որովհետեւ կորուստներն են, որ հիշատակ են դառնում եւ ապրած օրը, անցկացրած կյանքը դարձնում հոգեբանական արժեք, գոյության հիմք: Ռ՞վ է Մամյանը՝ վերջին ուսուցիչը. ազնիվ, բարի ու ճշմարտախոս մի մարդ, որն ապրելու դասեր է տալիս կյանք մտնող սերնդին: Նա իր աշակերտ-

ների մեջ վերականգնում է փլուզման եզրին գտնվող հոգեբանական ու բարոյական կարելու արժեքները: Եվ այս ամենը՝ բարձր դասարանի աշակերտների եւ ուսուցչության միջեւ ստեղծված անհիմն, ձեւական բախումի պայմաններում:

Պետրոսյանի ստեղծագործական զարգացման մեջ կարելու տեղ ունեն վերջին երկու վեպերը: Ինչպես Մաթեոսյանը «Խուժար» վիպակում քայլ արեց դեպի քաղաք, այնպես էլ Պետրոսյանը քայլ արեց դեպի գյուղ՝ արժարժեքով լքվող գյուղի խնդիրը: Երկու արձակագիրներն էլ, կարծես, փոխադարձաբար ցանկացան ցույց տալ, որ, իրոք, Էականը ոչ թե գյուղը կամ քաղաքն է, այլ գրողի հայեցակետը:

Մամյանի պես ազնիվ ու կայուն մարդկային նկարագիր է նաեւ «Մենավոր ընկուզենի» վեպի գլխավոր հերոսը՝ Սահակ Կամսարյանը: Նա լքվող գյուղի պահպանն է, ինչպես Մաթեոսյանի Տերը: Նա համագյուղացիներին կոչ է անում վերադառնալ իրենց բնօրրանը: Գյուղերի դատարկումը, որը ժամանակի ամենացավոտ հարցերից մեկն է, մարդկանց համար միայն բնակության վայրի փոփոխություն չէ, այլ, առաջին հերթին, հողի ու մարդու դարավոր կապերի խզում: Գյուղը լքող իր անհեռատես հերոսներին Պետրոսյանը կանգնեցնում է բարոյական դատաստանի առջեւ: Եվ նրանք, ովքեր փորձում են հայրենի գյուղը վերածել սոսկ գերեզմանոցի, հանդիպում են Սահակ Կամսարյանի ինքնեցրած ուղեփակոցին: Վեպում արժարժեքով է նաեւ կենցաղային ամուր հիմքերը կորցրած եւ սրճարաններում թրեւ եկող սերնդի հեռանկարի հարցը: Այս դեպքերում եւս առաջնային է բարոյական հիմքերին վերադառնալու խնդիրը, որն ուրիշ գծով կապվում է լքվող գյուղի հիմնահարցի հետ: Այդ կապակցությամբ Պետրոսյանն արժարժում է նաեւ ժամանակակից կյանքի հետ կապված շատ այլ մտքեր, որոնք ունեն մեկ գլխավոր ուղղվածություն. այն է՝ առաջընթացի ճանապարհին չկորցնել դարերի ընթացքում ժողովրդի ստեղծած հոգեւոր ու բարոյական արժեքները:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԺԻ

Սկիզբը՝ էջ 3

Աղթամարի կաթողիկոս Գրիգորը մահացավ 1761 թվին: Նրա գործունեության մասին պատմությունը հիշատակներ չի պահպանել: Նրան հաջորդեց Թովմասը, որն Էջմիածնի պաշտպանության կարիքն ուներ եւ պարտքերից բռնադատված՝ գնաց Էջմիածին: Կիրակի օրը նա ինքնահոժար պատրաստակամությամբ խոստովանում է, որ իրենք Ղազար Ջահկեցու նգովքի ներքո էին եւ ծնկաչոք ու բաց գլխով, «Անառակ որդու գոչման» շարականն արտասանելով, խնդրում է արձակում: Հակոբ Շամախեցին Թովմասին սիրով ընդունեց, արձակում տվեց եւ հատուկ կոնդակով հաստատեց իր պաշտոնում: Նա վերանորոգում է ուխտարության կանոնները, ինչպես նաեւ՝ նգովափակ կանոնները, որոնք հաստատվել էին Ղազարի եւ Նիկողայոսի օրոք: Կարգադրում է, որ աղթամարցից այլեւս ինքնազուխ կաթողիկոս չունենան, եւ նրան պատվով եւ վերադարձնում: Թովմասն իր ամբողջ կյանքում հավատարիմ մնաց ադ ուխտին:

Նա Էջմիածնից էր ստանում մեռնող եւ բաշխում իր վիճակում: Թովմասը 1776 թվի դեկտեմբերին զանգատվում է Սիմեոն Երեւանցի կաթողիկոսին՝ կապված Աբրահամ Մոկացի վարդապետի հետ, որը համագործակցելով Մարգարե վարդապետի հետ եւ իրեն հովանավոր ունենալով քուրդ իշխանավոր Ավդուլա խանին՝ կամեցել էր դառնալ այդ կողմերի ինքնազուխ կաթողիկոս: Թովմասը խնդրում է, որ Երեւանցին նրան բանադրի, իսկ Ավդուլան եւ Աբրահամն էլ հատուկ նամակով դիմում

են Երեւանցուն, որ նա Մոկեն անջատի եւ ուրիշ կաթողիկոսություն հաստատի, որ իբր իրենց երկիրը տարակազ է Աղթամարից: Երեւանցին պահպանեց օրինականությունը եւ գրեց Աբրահամին ու Մարգարեին, ինչպես նաեւ Ավդուլային, որ դա հակասում է եկեղեցական օրենքներին ու Վանի առաջնորդին ու Նիկողային էլ հանձնարարեց նամակները տեղ հասցնել ու հսկել գործին: Սակայն առաջին նամակները, որ գրված էին 1765 թվի հունվարի 10-ին, ինչ-ինչ պատճառներով տեղ չհասան, ուստի մարտի 14-ին նա նորից գրեց: Խնդիրը կարգավորվեց, եւ Աբրահամին բանադրելու կարիք չզգացվեց: Թովմասը մահացավ 1783 թվին:

Երուսաղեմի պատրիարք Կարապետ Գանձակեցու հովվապետության շրջանն աչքի ընկավ հույների ու լատինների անհիմն պահանջներով եւ ոտնձգություններով: Շնորհիվ Կարապետի առավել քան աչալուրջ գործունեության՝ ելքը հայերի համար միշտ հաջող եղավ, որին մշտապես իր աջակցությունն էր բերում Կ. Պոլսի աթոռը: Մանրամասնությունների մեջ մտնելը պարզապես անիմաստ է: Կարապետը կարելուր նորոգություններ կատարեց Սբ Հակոբի մայրավանքում, հայկական փողոց եկեղեցիներում, ինչպես նաեւ՝ Սբ Հարություն տաճարում: Սակայն հույների եւ լատինների ոտնձգությունների դեմ պայքարելիս եւ նորոգություններ կատարելիս նա ծանր պարտքերի տակ ընկավ, ուստի 1765 թվի Չատկից հետո, որ այդ տարի ընկնում էր ապրիլի 3-ին, նա Հովակիմ Զանաբեցի վարդապետին ուղարկեց Կ.



Պոլիս՝ իբրեւ փոխանորդ, որ աշխատանք տանի՝ իրեն եւ աթոռը պարտքերից ազատելու համար: Սակայն Գրիգոր Բասմաջյան պատրիարքը նրա դեմ հակառակություն ուներ՝ իր գրած խնդիրը չկատարելու համար, ուստի մեծամեծների ժողով հրավիրեց, որտեղ Կարապետ պատրիարքին մեղադրեցին ինչ-ինչ հարցերում եւ որոշեցին փոխառությունների կնիքը նրանից վերցնել: Ժողովը տեղի ունեցավ 1765 թվի օգոստոսի 28-ին: Այսպես թե այնպես Կարապետը շարունակեց իր պաշտոնավարությունը մինչեւ իր մահը, որը տեղի ունեցավ 1768 թվի հունվարի 24-ին, երբ նա դեռ 60 տարեկան չկար: Նա պաշտոնավարեց շուրջ վեց տարի: Նրան հաջորդեց Պողոթն Վանեցին՝ միաբանության ընտրությամբ, Կ. Պոլսի աթոռի եւ մեծամեծների հավանությամբ՝ ստանալով

հաստատման հրովարտակ 1768 թվի ապրիլի 12-ին: Դատելով նրա հիշատակարանից՝ նա մանուկ հասակում՝ Շոթայակրի օրոք, եղել է Երուսաղեմում՝ շուրջ 700 անձից բաղկացած ուխտավորների մի մեծ կարավանի հետ, որոնց մեջ էին Սշո առաջնորդ Աբրահամ Խոշաբեցին, Հակոբ Բալաթցին, Գաբրիել Պրուսացին եւ այլ վարդապետներ, եւ որոնց Դամասկոսից կամեցել էր ընկերանալ կուսակալ Իսմայիլ փաշան: Պողոսի հայրը՝ Մարգարան, Աբրահամի եւ ուրիշների միջնորդությամբ կարողանում է իր որդուն ընդունել տալ միաբանություն, իսկ ինքն էլ վանքում դառնում է պարտիզպան: Պողոսի հոր մահից հետո գալիս է նրա հորեղբայրը ու տղային տանում Վան, սակայն 1734 թվին, հավանաբար շուրջ 20 տարեկան հասակում, Պողոսը կարողանում է վերադառնալ Երուսաղեմի միաբանություն: Սկզբում ձեռնադրվում է սարկավագ, իսկ չորս տարի անց՝ վարդապետ: 1744 թվին առաջին անգամ Նիկրակության է կոչվում սկզբում Վան, այնուհետեւ՝ Եվդոկիա եւ այլուր, իսկ 1752 թվին Միւսաս կաթողիկոսը նրան ձեռնադրում է եպիսկոպոս: Թեոդորոս պատրիարքի օրոք, որպես Նիկրակ, մեկնում է Դրիմ, Ռումելիա, Չմյունիա եւ Նիկոմեդիա, իսկ Կարապետ պատրիարքի օրերում վարում է վանքի դարպասը Նիկրակի պաշտոնը, մինչեւ որ հաջորդում է նրան՝ իբրեւ պատրիարք: Դարպասը Նիկրակի իր պաշտոնը նա հանձնում է վարդապետ Սարգիս Ֆերմանյանին:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

Սկիզբը՝ թիվ 12

Նախ սկսենք նրանից, թե ով էր Կոստանդին Երզնկացու հիշատակած «պարոն Ամիրը»:

Մ. Աբեղյանը ենթադրում է, որ «պարոն Ամիրը» նույն Ամիր Փոլինն է, որ Թավրիզում արտագրել է Կոստանդին Երզնկացու քերթվածները (Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 308*):

Ըստ երեւոյթի, բանաստեղծի սիրելի Ամիրը եղել է Երզնկայի «Եղբայրության» անդամներից մեկը: Ուշագրավ է նաեւ, որ նա տաղերի հետ մեկտեղ իր ձեռագրում ընդօրինակել է նաեւ «Եղբայրության» հետ սերտ կապեր ունեցող Զովհաննես Երզնկացու երկը՝ «Յաղագս միաբանութեան եղբարց բանք սակաւք եւ պիտանիք. վկայութիւն գրոց սրբոց, զոր ժողովեալ գրեցի սիրով եղբայրութեան այնոցիկ, որք ցանգան փափաքանօք բանից իմաստութեան» (Կոստանդին Երզնկացի, *Տաղեր, էջ 70*) խորագրով:

Տաղերից մեկ ուրիշը, որ դարձյալ ուղղված է սիրելի «Եղբայրներին», խրատ է օտար կնոջը՝ չհետեւելու, չար եւ անզգամ կանանցից հեռու մնալու, առաքինի ու ազնիվ կնոջ արժեքն իմանալու եւ ընտանիքի պատիվն անարատ պահելու մասին: Չգուշանալով անբարոյական կանանցից՝ նա գրում է (նույն տեղում, էջ 21).

*Թէ եղբօր այլ հանդիպի հանց բոզ ու շուն,
Թէզ մահու խորհի նորա ցայգ՝ չ
յիրիկուն:*

Այս տաղում խոսք կա նաեւ «աղէկ կտրիճների» մասին, որոնք, ինչպէս երեւում է, հեթանոսական վայելքների սովոր մարդիկ են (նույն տեղում, էջ 218).

*Թէ քանի կըտորիճ աղէկ բոզն է
խաբէլ,
Ու վանց իր շատ ֆելերուն զինք
կորուսել:
Թէ խելօքն է Սողոմոն արքայ
եղել՝
Ի նորա չար հընարեն զինք չէ
թափել:*

«Յաղագս եղբայրութեան, բարոյ եւ չարի» վերնագրով տաղի մեջ հեղինակը գանգատվում է ոչ արյունակից, օտար եղբորից, որը խրատ չի լսում, սիրում է կյանքը, աշխարհը, ուզում է շուտով կատարել իր սրտի բոլոր ցանկությունները, ուշք ու միտքն անընդհատ դուրսն է, շրջում է ջահել անգետների մեջ, ուրախանում, կերուխում անում նրանց հետ (նույն տեղում, էջ 184).

*Չիմ գանկալաւ լըսեցեք,
յիսն առեք բան մի խըրատ.
Իմ աղբարն է բեվայֆայ, որ
ինք չունի իսկի հաւատ:*

Այս «Եղբայրը» եւս սովորույթներով նման է մյուս տաղերում հիշվող աշխարհականներին:

«Եղբայրների» հետ առջվող տաղերից մեկ ուրիշն էլ ցույց է տալիս, որ Կոստանդին Երզնկացին ամենից ավելի ծանր վիրավորանք, հոգու սուր կսկիծ ու մեռակություն է զգացել հենց այն ժամանակ, երբ խաբվել է դեպի իր «Եղբայրն» ունեցած հավատի, սիրո ու վստահության մեջ: Տաղը վերնագրված է «Բանք խօսիլ ի ժամ տրտմութեան, զոր գրեց ի առ պահն վասն սուտ եղբարց, զոր վիրաւորեցայ» (նույն տեղում, էջ 192-193).

*Ոչ ունիմ մարդ սիրելի ի
(յընտանեաց) ինձ կամ օտար,
Որ գըթայ սըրտովն ի յիս, կամ
աղետայ զիս իր եղբայր.
Ով սըրտով էր սիրելի՝ եղաւ
հեռի յիսն՝ ի օտար,
Նա օտարին ի՞նչ մեղ դընեմ,
երբ որ լինիմ յիրմեն ազատ:*

Քննվող տաղերը վկայում են, թե «Եղբայր» բառի պատահական գործածությանը չէ, որ հանդիպում ենք Կոստանդին Երզնկացու ստեղծագործություններում, թե դրանց մեջ հիշվող «սիրելի եղբայրները» պատահական անձինք կամ կրոնավորներ չեն, այլ որոշակի նախասիրությունների, համոզումների տեր աշխարհականներ:

Լ. Խաչիկյանը պատմիրատու «Եղբայրներին» եւ Երզնկայի միաբանության «Եղբայրքին» նույնացնում է (տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում..., էջ



ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԿՏՐԻՃՎՈՐԱՅ ԵՐԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ» ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱՊԱՇԿՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

84): Ա. Սրապյանը նույնպես այդ կարծիքին է. «Եղբայրք բառի գործածությունը Երզնկացու քերթվածներում պատահում է շատ հաճախ՝ տարբեր առիթներով ու տարբեր իմաստներով: Նրանցից մի քանիսը որոշ հիմքեր են տալիս ենթադրելու, թե դրանք դեռեւս 1280 թ. գոյություն ունեցող քաղաքային աշխատավորական շերտերի ձեւավորված կազմակերպության»՝ «Եղբայրության» անդամներից են, որոնց կանոնների, վարք ու բարքի ու կենցաղավարության մասին բավականաչափ տեղեկություններ ենք գտնում Կոստանդինի և խորդ՝ Զովհաննես Երզնկացու ստեղծագործություններում: Արդեն ասվել է, որ այդ միության մեջ հիմնականում ընդգրկված է եղել քաղաքի առետրական ու արհեստավոր երիտասարդությունը, որ հաճախ անտեսել է միջնադարյան կրոնական նորմաները, ազատ ու անկաշկանդ աշխարհիկ կյանք վարել, իր ժամանակը կերուխումի եւ շրջագայությունների մեջ անցկացնելով» (Կոստանդին Երզնկացի, *Տաղեր, էջ 67-68*):

Ուրեմն, «Եղբայրության» անդամները սերտ կապերի մեջ են եղել ե՛ւ Կոստանդինի, ե՛ւ Զովհաննես Երզնկացու հետ: Նրանք վերջիններիս պատվիրատուներ են եղել: Հիշենք Հակոբ Մանկտավագի խորհրդանշող Զովի. Երզնկացու գրած բանաստեղծությունը. «Յոհաննու մեծի մակաւուն Պլուզ ասացեալ ի խնորոյ Յակոբայ Մանկտավագի Եզընգեցոյ»: Այստեղ մենք հանդիպում ենք «Սահման եւ կանոնքի» գրեթե բոլոր կանոններին:

Հակոբ Մանկտավագը հավանաբար եղել է «Եղբայրության» ավագներից մեկը եւ մտերիմ է եղել Զովհաննես Երզնկացու հետ: Բանաստեղծը հորդորում է Հակոբին զարթնել «*Ի քնոյ մեղաց*», հետ կանգնել չար ծանապարհից: Բանաստեղծությունը բաղկացած է քառասուկոթ տնից: Այնտեղ սկզբից հանդիպում ենք Զովհաննես Պլուզի հորդորներին ու մեղադրանքներին, իսկ քիչ հետո՝ Հակոբ Մանկտավագը մեղա է գալիս՝ հերթով թվարկելով իր

մեղքերը, ներում է հայցում (Ա. Սրապյան, *Հ. Երզնկացի, Եր., 1958, էջ 176*).

*Հիւրոց չեմ լեալ ասպնջական.
Ոչ եմ տուեալ տեղի յիմ տան,
Ոչ աղքատաց ածել սեղան,
Չարթոյ զիս, տէր, ի քնոյ*

*մեղաց:
Քաղցելոց չեմ լցեալ ապուր,
Ոչ արբուցել ծարավեաց ջուր,
Որ քնկալեալ յիմ տանն հիւր,
Չարթոյ զիս, տէր, ի քնոյ մեղաց:*

Բանաստեղծության մեջ մենք հանդիպում ենք Հակոբի անձին վերաբերող մի քանի տեղեկությունների: Այն, որ պատվիրա-

վարմանի Սրապյանն իրավացիորեն փորձում է նույնացնել Մխիթար Ապարանեցու եւ Զովհաննես Երզնկացու հիշատակած Հակոբ Մանկտավագին: Նա բերում է մի քանի փաստ այն մասին, որ 13-րդ դարում շատ աղանդավորներ ապաստանում էին Երզնկա քաղաքում, եւ հնարավոր է, որ Մխիթար Ապարանեցու հիշած աղանդավոր «Գորգեցիք», որ հաստատվել էին այդտեղ, կապեր ունենային ոչ միայն Հակոբ Մանկտավագի, այլեւ «Եղբայրության» ուրիշ անդամների հետ: Նկատի ունենալով ժամանակի, տեղի եւ անունների նույնությունն ու անձանց բնութագիրը՝ կարծում ենք, թե Ապարանեցու եւ Զովի. Երզնկացու գործերում հիշվող Հակոբ Մանկտավագը նույն անձնավորությունն է: Եթե այդպես է, ապա կարելի է ենթադրել, թե Հակոբ Մանկտավագը եւ նրա հետ կապ ունեցող ուրիշ «Եղբայրներ» եւս հարել են աղանդավորական գաղափարներին (Կ. Երզնկացի, *Տաղեր, էջ 28*):

14-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններից տեղեկանում ենք, որ Երզնկայից

ձուկ է տարել Անտիոք: Խմբում կան ութսուն զինյալ կտրիճներ, որոնց առաջնորդում է Մանկտավագը: Նրանք Երզնկայի «մանկտիների» նման սիրում են գինարբուքներ եւ անգամ օտար քաղաքներում չեն հրաժարվում երգից ու ուրախությունից, կնոջից ու գինուց: Կտրիճ մանուկները Վանից մինչեւ Անտիոք անցել են բազմաթիվ փորձությունների ու վտանգների միջով եւ հաղթահարել են այդ դժվարությունները:

Մ. Ուռնայեցու վկայությամբ՝ դեպքը եղել է մոտավորապես 1120 թվին: Ուրեմն՝ «մանկտավագությունը» գոյություն ուներ դեռեւս դրանից առաջ էլ՝ առնվազն 12-րդ դարի սկզբներից:

Նշենք, որ «մանկտավագի» մասին հետաքրքիր տեղեկություններ ենք իմանում Զովհաննես Պլուզ Երզնկացու խրատական մի գործից՝ «Նորին Յոհաննես վարդապետ Եզընկայեցույ լիկին կանոնք եւ խրատք տղա-յահասակ մանկանց աշխարհականաց, որք մարմնաւոր եւ երկրաւոր խորհրդով վարեն զկեանս աշխարհիս, զորս եւ մեք յաս-



բացի, այս «Եղբայրությունները» գործել են նաեւ Վանում, Անտիոքում եւ Սուլթանիայում (Լ. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում..., էջ 79):

Մատթեոս Ուռնայեցին իր «Ժամանակագրության» մեջ պատմում է մի ուշագրավ դեպք. «Նույնպես յաւուրն բարեկենդանին եւ նոյն ամիս եկեալ կարաւան ի յարեւելից ի քաղաքն Անտիոք եւ բարձեալ բերէին տարեխ ձուկն, եւ կային ի մեջ շուկային ի գինարբութեան. եւ ի լսել քաղաքացեացն զձայն պարուց նոցա, ամենայն արք հասանին ի վերայ նոցա եւ ծեծելով զանաւից արարին զնոսա, սկսան հանել զնոսա ի քաղաքէն. էին արք իբրեւ ութսուն՝ բրեզածք եւ ընտրեալք քաջութեամբ: Եւ յայնժամ ձայն տուեալ մանկտաւագն նոցա, եւ նոցա միաբան գինեմխեալք էին՝ յարձակեացն ի վերայ քաղաքացեացն եւ ի Սեւոտոյն դրանէն մինչեւ ի տէր-Պետրոս՝ զամենայն արք քաղաքին փախստական արարին եւ կառափնաբեկ եւ ոտնակոտոր արարին արս բազումս. եւ ապա խաչիւ եւ անտարաւնով երդուեալ նոցա բնաւ այլ ոչ մեղանչել նոցա: Եւ յայնժամ արարին խաղաղութիւն եւ դարձան ի տեղիս իւրեանց» (Մ. Ուռնայեցի, *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 226*):

Առետրականների այս խումբը Վասպուրականից տառեխ

տուածային աւրինացն եւ ի սուրբ գրոց ուղղեմք զայնպիսին ի հոգեւորն շնորհաւքն Աստուծոյ» (Է. Բաղդասարյան, *Հ. Երզնկացի եւ նրա խրատական արձակք, էջ 230-239*):

«Կրկին կանոնք»-ը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում Զովհաննես Երզնկացին երիտասարդներին հորդորում է սիրել գիտությունն ու ուսումը, որովհետեւ դրանք մարդուն դարձնում են առաքինի, «աչօքն լուսաւոր եւ մարդ կատարեալ» (նույն տեղում, էջ 231): Այստեղ հանդիպում ենք նաեւ այլ տեղեկությունների. «...մանկտաւագ, եւ ինչէն զտղայահասակ մանկունս իրէտեւ յորդեգիրս, էն տան նոցա գաւտիս... Մանուկն այն է, որ չկորուսանէ զպտակերին գեղեցկութիւնն եւ նման լինի անաւոց» (նույն տեղում էջ 239):

Մանկտավագը պարտավոր է լինել գրագետ, Սուրբ Գրքին տեղյակ: Նա պիտի հնազանդ լինի Եկեղեցուն, սուրբ կյանք ունենա եւ միշտ բարի գործեր կատարի, որպեսզի իր անձով օրինակ դառնա մանուկներին ու նրանց հորդորի «յամենայն գործս բարի, եւ բանիւ եւ գործու առաջնորդեն նոցա, եւ տան գաւտի սրբասէր մանկանցն» (նույն տեղում, էջ 233):

Շարունակելի

Վարդան ԵՐԻԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

«**Ա**ղոթքի ժամանակ թեպետ արտասուքների աղբյուր ունենաս, մի՛ հպարտացիր՝ իբրեւ թե առավել ես շատերից, քանզի աղոթքի օգնականությամբ շնորհը Տիրոջից է, որպեսզի հոժարությամբ խոստովանես քո մեղքերը եւ արտասուքների միջոցով հաշտեցնես Աստծուն»:

Ս. Նեղոս Սինայեցի

Աղոթք. տրտմության, տարակուսանքների եւ վշտերի դեղ ու սփոփանք...

Յուրաքանչյուր հավատացյալ ցանկանում է զգալ Աստծո ներկայությունը, աղոթել Նրան, սփոփանք, մխիթարություն եւ խաղաղություն գտնել:

Աստված կամենում է, որ բոլորս ապաշխարենք եւ դադարենք մեղանշելուց. «Տերը չի ուշացնի Իր խոստումը, ինչպես կարծում են ոմանք, թե ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդեպ. քանզի չի ուզում, որ որեւէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքը ապաշխարեն» (Բ Պետր. Գ 9), ցանկացած իրավիճակում հավատան Իրեն եւ չհուսալքվեն. «Այո՛, ասում եմ ձեզ, Նրանց իսկույն արդարություն կանի. իսկ երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի» (Ղուկ. ԺԸ 8): Նա ակնկալում է, որ կյանքի բոլոր հանգրվաններում Իր ներկայությունը փնտրենք, հետեւենք պատվիրաններին, վստահենք, ինչպես մանուկն է իրեն անսահման սիրող հորը վստահում, հոգանք երկնային արքայության եւ արդարության մասին. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա: Այսուհետեւ հոգ մի՛ արեք վաղվա մասին, որովհետեւ վաղվա օրը իր մասին կհոգա. օրվա հոգը բավ է օրվա համար» (Մատթ. 233-34):


Աստված մեզ հետ խոսեց Նաեւ Իր միածին Որդու միջոցով. «Այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով, Որին ժառանգ նշանակեց ամեն ինչի եւ Որի միջոցով ստեղծեց տիեզերքը» (Եբր. Ա 2): Զրիստոսի վարդապետությունը Յոր խոսքն է, Նրա կամքը, ցանկությունն ու պատգամը, որին հետեւելով՝ կգտնենք մեզ հուզող շատ հարցերի պատասխանը:

Հին Կտակարանն ընթերցելիս նկատում ենք, որ Աստված աղոթքներին հաճախ պատասխանել է հրեշտակների միջոցով, երբեմն Ինքն է հայտնվել եւ խոսել, ինչպես օրինակ՝ Մովսեսի դեպքում, երբ տասնաբանյա պատվիրանները տվեց: Նա մարդկանց հետ խոսում էր Նաեւ երազների, տեսիլների միջոցով: Բազմաթիվ են դեպքերը, երբ Աստված լսում եւ անմիջապես պատասխանում է աղոթքներին...

Իսկ ինչո՞ւ են անպատասխան մնում մեր աղոթքները, ի՞նչն է խանգարում կապ հաստատելու Տիրոջ հետ, զգալու Նրա ներկայությունը:

Անդրադառնանք Դանիել մարգարեի գրքին, որը նկարագրում է հեթանոսական միջավայրում ապրող չորս հրեաների կյանքը: «Դանիելը՝ ազգի մարգարե» աշխատության հեղինակ Ջոն Օկսը գրում է, որ մարգարեական այս գիրքը հալածանքների ծանր ժամանակաշրջանում ապրող հրեաների համար հուսադրման եւ ներշնչանքի աղբյուր էր: Այն հրաշալի օրինակ է, թե փորձությունների ժամանակ ճշմարիտ հավատացյալն ինչ-

պես պետք է աներեր պահի հավատը՝ նույնիսկ մահվան սպառնալիքի տակ: Այս գրքում Աստծո հետ փոխհարաբերությունների զարմանահրաշ դրսեւորումներ ենք գտնում: Դանիելը մարգարեանում է ոչ միայն շատ ազգերի եւ թագավորությունների ապագան, այլեւ Մեսիայի գալուստը: Նա Տիրոջից երազները մեկնելու եւ դրանց նշանակությունը բա-



ցատրելու շնորհ է ստանում եւ չնայած դաժան հալածանքներին՝ չի հեռանում Աստծուց, ապրելով հեթանոսական աշխարհում՝ կուռքերի առաջ երբեւէ չի խոնարհվում: Իսկ ի՞նչ առանձնահատկություն եւ բովանդակություն ունեն Դանիել մարգարեի աղոթքները, ինչո՞ւ էր Աստված անմիջապես արձագանքում դրանց...

Աստված սիրում է արդարներին. Դանիելը հույժ աստվածալախ եւ բարեպաշտ մարդ էր. «Եվ եթե այնտեղ լինեն այն երեք մարդիկ՝ Նոյը, Զոբն ու Դանիելը, Նրանք իրենց արդարության համար փրկվելու են», - ասում է ամենակալ Տերը (Եզեկ. ԺԴ 14): Սուրբգրային մեկ այլ հատվածում կարդում ենք, որ մեղքերը մեզ հեռացնում են Աստծուց. «Մի՞թե Տիրոջ ձեռքն անկարող է փրկել, կամ Նա ծանրացրել է Իր ականջը, որ չլսի. ո՛չ, ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր եւ Աստծու միջեւ, ձեր անօրենությունների պատճառով է Նա Իր երեսը շրջել ձեզանից, որ չգթա» (Ես. ԾԹ 1-2): Տերը մեր սրտերն է քննում, եւ արդարությունը Նրա համար այլ բովանդակություն ունի. «Երկու մարդ տաճար ելան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի եւ, ինքն իրեն, այս աղոթքն էր ասում. «Աստված՛ իմ, շնորհակալ եմ քեզանից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շաքողները, եւ կամ ինչպես այս մաքսավորը. այլ շաքաղ երկու անգամ ծոմ եմ պահում եւ տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի եւ չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը եւ ասում. «Աստված՛, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Ասում եմ

ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. որովհետեւ, ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. ԺԸ 10-14): Հիսուսը պատմեց այս առակը եւ բացատրեց, թե ինչ է ցանկանում դրանով ասել. «Այս առակն էլ ասաց ոմանց, որոնք իրենք իրենցով պարծենում էին, թե արդար են, եւ արհամարհում էին ուրիշ շատերին» (Ղուկ. ԺԸ 9): Առակը Նրանց համար է, ովքեր իրենց կարծում են ամենաարդարն ու ազնիվը եւ մտածում, թե արդարությունը արարքներով է պայմանավորված: Նկատում ենք, որ ներկայացվող անձինք իրենց վարքագծով խիստ տարբեր են: Կարող ենք կարծել, թե փարիսեցին կենսակերպով, վարքով ար-



ՄԱՐԳԱՐԵԻ ԱՂՈԹՔԸ

տարբերվում էին իրենց վարքագծով եւ կենցաղով: Սակայն Աստված Նրանց արդար էր համարում ոչ միայն արարքների եւ վարքի, այլ անսահման հավատի, նվիրվածության համար: Նրանք, ինչպես եւ մենք բոլորս, սխալական մահկանացուներ էին, իսկ «Նա, ով պահում է ամբողջ օրենքը եւ միայն մեկ բանով սայթաքում, պարտապան կլինի ամբողջ օրենքին» (Հակ. Բ 10): Լինելով խիստ բարեպաշտ՝ Նրանք եւս մոլորվում էին, սայթաքում, սխալներ գործում... սակայն անսահման եւ հաստատուն հավատը Նրանց մաքրագործում եւ արդարացնում էր:

Դանիելի գիրքը կարդալիս մեկ անգամ եւս համոզվում ենք, որ խոնարհությունն է ուղի հարթում դեպի Աստված: Զննարկենք Դանիել մարգարեի հետ պատահած մի դեպք. Նա բուլգոդոնոսոր արքան երազ է տեսնում, կանչում է իմաստուններին, մոգերին, կախարհներին ու աստղագուշակներին, որպեսզի մեկնեն իր երազը: Սակայն վերջիններս չեն կարողանում երազը եւ դրա նշանակությունը բացատրել, եւ արքան հրամայում է բոլորին սպանել. «Չրաման արձակվեց, եւ իմաստունները կոտորվում էին: Փնտրում էին Դանիելին եւ Նրա ընկերներին՝ սպանելու համար Նրանց» (Դանիել Բ 13): Դանիելը, տեղեկանալով այդ մասին, գնում է Նաբուգոդոնոսորի մոտ եւ ժամանակ խնդրում՝ խոստանալով մեկնել երազը: «Դանիելը մտավ իր տունը եւ բանը հայտնեց իր ընկերներին՝ Անանիային, Ազարիային եւ Միսայելին: Նրանք գթություն էին խնդրում երկնքի Աստծուց, որպեսզի Նա Դանիելին ու իր ընկերներին կորստի չմատնի բաբելացի այլ իմաստունների հետ» (Դանիել Բ 16-18): Նույն գրքի Բ գլխի 19-23-րդ համարներում տեսնում ենք, որ Տերը պատասխանում է մարգարեի աղոթքներին. «Այն ժամանակ գաղտնիքը Դանիելին հայտնվեց գիշերային տեսիլքում: Դանիելը օրինեց երկնքի Աստծուն եւ ասաց. «Թող օրինյալ լինի Տիրոջ անունը հավիտյանս հավիտենից, որովհետեւ Նրանն է իմաստությունը, հանճարը եւ գորությունը: Նա է, որ փոփոխում է ժամերն ու ժամանակները: Թագավորներ եւ կարգում եւ փոփոխում, իմաստուններին իմաստություն է տալիս եւ խելամիտներին՝ իմա-

ցություն, բացահայտում է խորին եւ ծածուկ բաները, գիտի, թե ինչ կա խավարում, եւ լույսը Նրա հետ է: Գոհություն քեզ, մեր հայրերի՝ Աստված, օրհնում եմ քեզ, որովհետեւ ուժ եւ իմաստություն տվեցիր ինձ եւ հայտնեցիր ինձ այն, ինչ որ մենք աղոթքներով խնդրեցինք քեզանից, եւ բացատրեցիր ինձ թագավորի տեսիլքը»:

Անսահման հավատի, վստահության եւ հնազանդության համար Աստված պատասխանում է Նրա աղոթքներին: Սակայն Դանիելը չի մեծամտանում եւ չի փորձում այդ ամենը վերագրել իրեն, այլ առավել խոնարհեցնելով իր անձը՝ վարվում է այսպես. «Թագավորը՝ պատասխանեց Դանիելին, որի անունն էր Բադ-դասար, եւ ասաց. «Կարո՞ղ ես պատմել ինձ իմ տեսած երազն ու հայտնել Նրա մեկնությունը»: Դանիելը պատասխանեց թագավորին եւ ասաց. «Այդ գաղտնիքը, որի մասին հարցնում է արքան, իմաստունները, մոգերը, հմայողներն ու բախտագուշակները արքային պատմել չեն կարող, այլ երկնքում կա Աստված, որ հայտնում է գաղտնիքները: Նա՛ր ցույց տվեց Նաբուգոդոնոսոր արքային, թե ինչ պիտի լինի գալիք օրերում: Զո երազն ու քո գլխում ծագած տեսիլքը, որ դու տեսել ես անկողնում, այս է...» (Դանիել Բ 26-28): Մարգարեն Տիրոջ իմաստությունն ու փառքը չի վերագրում իրեն՝ քաջ գիտակցելով, որ առանց Նրա գորության եւ օգնության ինքը ոչինչ է: Այդ իսկ պատճառով, երբ արքան հարցնում է. «Կարո՞ղ ես պատմել ինձ իմ տեսած երազն ու հայտնել Նրա մեկնությունը», Նա իր խոսքն սկսում է Աստծուն օրհնաբանելով, փառաբանելով, պատմում Նրա գորության եւ ողորմածության մասին: Իսկ Նաբուգոդոնոսոր արքան ուներ ճիշտ հակառակ նկարագիրն ու կեցվածքը՝ հպարտ էր, գոռոզամիտ. Նա իրեն է վերագրում աշխարհի հրշակերտ քաղաքներից մեկի՝ Բաբելոնի կառուցապատման ողջ փառքն ու մեծարանքը. «Այս բոլորը պատահեց Նաբուգոդոնոսոր արքային տասներկու ամիս հետո, մինչ Նա ճեմում էր իր թագավորական պալատում, Բաբելոնում: Թագավորն սկսեց խոսել եւ ասաց. «Սա այն մեծ Բաբելոնն է՛», որ եւ կառուցեցի որպես թագավորություն իմ կամքով եւ գորությամբ՝ ի պատիվ իմ փառքի» (Դանիել Դ 25):

Շարունակելի
Արիստես ԶԱՆԹԻՅԱՆ



Սկիզբը՝ թիվ 12

ԽՆԴՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Վարդավառը աղջիկները մի ամսի մեջ ցորեն կամ գարի էին աճեցնում։ Վարդավառի կիրակին մեկ մետրանոց խաչածե մի փայտ էին տնկում այդ կանաչի մեջ և զարդարում մանր վարունգներով, խնձորներով ու վարդերով, և գանազան ծիսական երգ ու պարով ողջ ներկաներն ուրախանում էին (մանրամասն այս մասին նկարագրում է Ե. Լալայանը)։

Չարդարված խաչածե այս փայտն անվանվում էր «խնդում», իսկ կատարվող ժողովրդական արարողությունը՝ «խնդում տոնք», որը, ինչպես գտնում է Յ. Խառատյանը, ժողովրդական ստուգաբանությամբ նշանակում է «ուրախություն տալ»։

Վարդավառն ամենուրեք ուղեկցվում էր մատաղով, որը բաժանում էին հարե-

ՎԱՐԴԱՎԱՐԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

լաններին, ճամփորդներին, աղքատներին և այլն։

Վարդավառի տոնն ուղեկցվում էր աղավախ թոցներով։ Ինչպես երևում է տարբեր հեղինակների նկարագրություններից, աղավախները թոցնում էին հատկապես Պատարագի ընթացքում։ Ներքին Բասենում՝ «Մինչ եկեղեցում երգում էին «Խորհուրդ խորին», «Սուրբ, սուրբ» ու «Մարմին տերունականը», դրսում երիտասարդները աղավախ էին թոցնում, ավելի ճիշտ՝ աղավախները եթերում ճախրում էին իրար հետ, թե որը որին իր ճարակությամբ ու երգով զմայլելու է» (Գ. Ա. Չակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, էջ 243)։ Իհարկե, աղավախ թոցները սովորությունը վաղնջական ժամանակներից է եկել և կրում է տարբեր հավատալիքների շերտեր և պահպանվել է նաև Վարդավառի ծիսական արարողություններում։

Վարդավառի բուն արարողությունը, սակայն, միմյանց վրա ջուր ցողելն է, որը, որպես կայուն սովորույթ, պահպանվել է և հասել մինչև մեր օրերը, և Վարդավառն ասելով՝ երբեմն հասկանում ենք իրար վրա ջուր լցնելը։

Ինչպես տեղեկացնում են ազգագրագետներն ու բանահավաքները, Հայաստանի ազգագրական բոլոր շրջաններում միեւնույն կերպ էին տոնում Վարդեւորը. ջուրը ջնջում էր տարիքային ու դասային տարբերությունները, և ջրային տարերքն իր հորձանուտի մեջ էր առնում բոլորին։ Ժողովուրդը սիրում էր հատկապես գետերի ու աղբյուրների մոտ տոնել։ Կժերով ու այլ ամաններով միմյանց գլխին ծածուկ ջուր էին լցնում և ոտքից գլուխ թրջում, հետևել՝ ծիծաղով ասում. «Էսօր վարդըր է, ամոթ է, որ Էսօրվա օրը աշխարհի երեսին չոր մարդ եղնի»։

ՎԱՐԴԱՎԱՐԻ ՈՒՄՏԱՐԱՍԱՐ ՍՈՒՐԸ

Եթե Ս. Ծննդյան ու Չատկի տոները նշում էին ս. Պատարագի մասնակցությամբ և հետո՝ տանը՝ ընտանեկան սեղանի մոտ, իսկ Տյառնընդառաջն սկսվում էր Տրևեղի կրակի վրայից թոցելով, ապա Վարդավառն իսկապես ուխտագնացությունների գլխավոր կենտրոնը Մշո Սուրբ Կարապետն էր։ Սուրբ Կարապետը կամ Հովհաննես Մկրտիչը մեծ ժողովրդականություն վայելող սուրբ էր (այս մասին մանրամասն բերված է մեծ բանագետ Ս. Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» կոթողային գրքում, էջ 158-166)։

Աշտարակում և ընդհանրապես Արեւելյան Հայաստանում Վարդավառի ուխտագնացության նման կենտրոն էր Հովհաննավաքը։ Վարդավառի ուխտատեղի էին նաև նշանավոր աղբյուրները, ջրի ակունքները և տարբեր լեռնագագաթները, որոնք եւս կապվում էին ջրի հետ, քանի որ լեռնային վտակներն ու աղբյուրներն սկզբնավորվում են լեռնագագաթներից։

Պարսկահայքի կյանքի և կենցաղի յուրօրինակ մի հանրագիտարան հանդիսացող «Սալբի» վեպում Վարդավառին Ս. Կարապետ ուխտի գնալու մասին Բաֆին գրում է. «Ամեն մարդ, որ ուխտել է Սուրբ Կարապետ գնալու, պետք է յոթ տարի շարունակ, Հոգեգալստից սկսած մինչև Վարդավառ, յոթն շաբաթ պաս պահե, որ արժանանա Նրա դուռն գնալուն... (Բաֆի, Երկերի ժողովածու, հտ. 2, Երեւան, 1983, էջ 34)։

Նոր Նախիջեւանում՝ «Սուրբ Կարապետ եկեղեցի ուխտ էին գնում միայն տղամարդիկ, մուրազ ունեցող երիտասարդները...»։

Հատկանշական է, որ Վարդավառին նախորդող յոթշաբաթյա կամավոր այս պահքը, պահվում էր ուխտի կատարման համար, անվանվում էր ոչ թե Վարդավառի, այլ Ս. Կարապետի պահք։

Կամավոր այս պահքի մասին Ե. Լալայանը գրում է. «Ս. Կարապետի պասը տեւում է Համբարձումից մինչ Վարդավառ. միայն շաբաթ է կիրակի օրերը ուսում են ուտիսի կերակուրներ, բայց ոչ մեղեքն։ Այս պահեցողության ընթացքում նաեւ ծամոն չեն ծամում, մեղք համարելով»։ Կամավոր այս պահքը կոչվում է «Աթոռքի» պաս։

Այս պահքը տարածված էր նաեւ Շիրակում։ «Համբարձումից մինչ Վարդավառ ամբողջ յոթ շաբաթ, շատերն առանց լուծելու, ինչպես Մեծ պասը «Սուրբ Կարապետ» կամ «Օխտն անվան» պաս են պահում յոթ տարի շարունակ և անընդհատ։ Յոթ տարին լրանալուց հետո գնում են Մշո կամ Տարնո Գլակա կամ Իննակ-Նյան վանքը «Մշո սուլթան» Հովհանու Մկրտչի «Մարմար» գերեզմանին ուխտ...»։

Վարդավառի Ս. Կարապետ ուխտագնացությունը լավագույնս նկարագրված է «Ծաղիկ» հանդեսի «Վարդավառի ավանդությունները» ակնարկում, ուր խոսվում է մատաղի արարողության, աղավախ թոցներով, եկեղեցուն կարմիր վարդի և կամ այլ ծաղիկների փնջերով նվիրելու սովորույթի և ուրիշ շատ հետաքրքրական ավանդությունների մասին։

Վարդավառի տոնը դարձյալ մեծ ժողովրդականություն վայելող տոներից է՝ ցարդ կենցաղավարվող, և ուղղված է մարդու և աշխարհի վերաշինման նպատակին։

ԱՆՆԱ ՊՈՐՈՍՅԱՆ

Հայ ժողովրդի դասերում օտարազգի ճանապարհորդների և միսիոներների գրվածքներում

Սկիզբը՝ թիվ 12

Ասենք ավելին՝ հայ ժողովուրդը ոչ վաղ անցյալում ազատագրեց պատմական Արցախը և Նույնիսկ նվաճեց որոշ աղբյուրական տարածքներ։ Ասվածից պարզ հետևություն. հայերն իրականում այնքան անճարակ չեն, ինչպես դա ներկայացվում է որոշ օտարազգի հեղինակների երկերում (տե՛ս Groseclose E., Ararat, London, Carrick & Evans, 1939, էջ 94, 96)։ Այնպես որ հայերի մասին ձեւավորված կարծրատիպ-պատկերացումները, որոնք հիմնված են ընդհանրացումների վրա, բնավ միշտ չէ որ լիովին ճշմարտացի են։ Նմանատիպ մի տարօրինակ ընդհանրացում է կատարում վերը հիշատակված Մարկո Պոլոն իր «Մարկո Պոլոյի գիրքը» գրվածքում՝ ասելով, թե իբր իր ժամանակ ապրած հայերը դարձել էին հարբեցողներ։ Համաշխարհային գրականության մեջ շատ հազվադեպ են հանդիպում այնպիսի գրքեր, որոնցում հայերին նման որակում է տրվում։ Այն, որ աշխարհում կան ազգեր (հիմնականում դրանք հյուսիսային ժողովուրդներն են), որոնց համար հարբեցողությունն ազգային ավանդույթ է դարձել, եթե չասենք՝ մշակույթի անօտարելի մաս, թերեւս անհերքելի փաստ է։ Սակայն, դժվար թե այդ արատավոր սոցիալ-հոգեբանական երևույթը հնարավոր լինի վերագրել կոնկրետ հայ ազգին կամ առնվազն նրա գերակշռող մասին։ Այս դեպքում ինչո՞ւ է իտալացի ճանապարհորդը նման տարօրինակ որակում տալիս հայերին։ Բանն այն է, որ մարդկային հոգեբանության մեջ կա մի հետաքրքիր առանձնահատկություն. վատ երևույթները, եթե նույնիսկ դրանք փոքր մասշտաբի են, ավելի վառ են տպավորվում մարդկանց մեջ և շատ հաճախ չափազանցացված ձևով են ընկալվում ու ներկայացվում։ Կարծում ենք, որ Մարկո Պոլոյի ասածների մեջ կա չափազանցության այդ տարրը։ Կասկա-



ծից վեր է, որ անարդարացի է սոցիալական մի փոքր խավի պահվածքն ու վարքագիծն ընդհանրացման ենթարկել և այդ ընդհանրացումը վերագրել մի ամբողջ ժողովրդի։ Բայց և այնպես Մարկո Պոլոն ընդհանուր առմամբ ճիշտ է գնահատում հայերին, մասնավորապես, երբ նա պնդում է, որ հայերը ճարպիկ վաճառականներ են, որոնք առեստուր են իրականացնում աշխարհագրական տարբեր շրջաններում։ Հայերի գործարար ձիրքի մասին, ի դեպ, գրել են օտարազգի բազմաթիվ ճանապարհորդներ և գրողներ։ Եվ նույնիսկ մեր ժամանակներում ենք հաճախ համոզվում օտարազգիների՝ հայ ժողովրդին տված այս գնահատականի ճշմարտացիության մեջ։ Հավելենք, որ Մարկո Պոլոյից բացի, հայ ժողովրդին բնութագրել են բազմաթիվ այլ օտարազգիներ։ Այսպես օրինակ՝ Ֆրանսիայի արքա Լյուդվիկոս XIV-ի պալատական բժիշկ Ժ. Տուրնեֆորտը մի երկհատորյա գիրք է գրել, որը վերնագրված է «Ճանապարհոր-

դություն դեպի Լեւանտը» (Tournefort J., A Voyage into the Levant. D. Midwinter, London, 1741)։ Սույն գրքի երկրորդ հատորում մի մեծ հատված նվիրված է հայերին, նրանց բարքերին ու սովորույթներին։ Հայերի մասին տեղեկությունները Տուրնեֆորտը հավաքել էր մոտավորապես 1680 թ. Թուրքիա կատարած ճանապարհորդության ընթացքում։ Ֆրանսիացի բժիշկն ամենայն բժախնդրությամբ ուսումնասիրել է հայ գյուղացիների վարքն ու բարքը և իր դիտարկումների մասին գեկուցել Ֆրանսիայի արքային ուղարկված իր նամակներում։

Հայերի մասին որոշ տեղեկություններ է թողել անգլիացի դիվանագետ և գրող Ջեյմս Մորիերը։ Ի դեպ, նա ծնվել էր Չմյունիայում 1780 թ.։ Նա Պարսկաստանում որպես դիվանագետ ծառայած ժամանակ բավականին հարուստ նյութ է հավաքել և այդ ամենն ամփոփել է մի քանի գրքերում։ Հատուկ ուշադրության է արժանի նրա «Իսֆահանցի Հաջի Բաբայի

արկածները» գիրքը (Morier J., The Adventures of Hadji Baba of Isfahan. Hart, New York, 1976)։ Սա մի արկածային երկ է, որի գլխավոր հերոսը խաբեբա է։ Վերջինս դեպքերում է Պարսկաստանով մեկ, խաբուր ու մոլորեցնում է իրեն հանդիպած մարդկանց։ Մի անգամ նա գալիս է Հայաստան և լսում Յուսուֆի ու Մարիամի պատմությունը։ Կարդալով այս պատմությունը՝ ընթերցողը պատկերացում է կազմում հայկական նշանորդի ու հարսնայաց արարողության մասին։ Ավելի ուշ նա նկարագրում է Էջմիածնի տաճարը, ու թեեւ ինքը՝ Հաջի Բաբան, իսլամադավան է, մեծ սիրով է խոսում հայերի մասին։ «Իսֆահանցի Հաջի Բաբայի արկածները» գրքից բացի, Մորիերը նաեւ գրել է «Ուղեւորություն Պարսկաստանի, Հայաստանի և Փոքր Ասիայի միջով դեպի Կոնստանդնուպոլիս 1808-09 թթ.» (Morier J., Journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople in the Years 1808 and 1809. Privately printed, London, 1809) գիրքը, որը պարունակում է մի չափազանց հետաքրքրական պատմություն՝ կապված Արարատ լեռան առասպելների հետ։ Մորիերի գրչին են պատկանում նաեւ «Պատանդ Չոխրաբը» (Morier. J., Zohrab the Hostage. Rupert Hart, London, 1832) և «Կարսեցի օրհորդ Վիշան» (Morier. J., Ayesha the Maid of Kars. Rupert Hart, London, 1834) գրքերը։ Թեեւ հիշատակված երեք երկերը նվազ հայտնի են, քան Մորիերի առաջին գրվածքը, սակայն դրանք էլ ոչ պակաս հետաքրքրական են։ Դրանք մասամբ հիմնված են հորինվածքների և մասամբ էլ՝ իրական փաստերի վրա։

Հայերին բավական լավ է բնութագրել նաեւ Վիլյամ Գուդելն իր «Հինը և նորը» գրքում (Goodell W., The Old and the New, Robert Carter, New York, 1853)։ Վերջինիս մեջ գրված է, որ հայերը մի ժամանակ անվատահեղի և անբարոյական ժողովուրդ էին, սակայն քրիստոնեություն ընդունելուց հետո հայերի բարոյական բնութագիրը փոխվեց (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 120)։

Շարունակությունը՝ էջ 8

Վերածվեց Քաջարանց գյուղի Աբ հակոբ եկեղեցին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ եւ օրհնությամբ ու ձեռամբ Մուշեղ եպս Բաբայանի՝ տեղի ունեցավ Սյունյաց թեմի Քաջարանց գյուղի Աբ Հակոբ եկեղեցու վերածումը: Սրբազան արարողությանը ներկա էին եկեղեցին վերակառուցող բարերարները, պետական այրեր, Սյունյաց թեմի քահանա հայրերը, պաշտոնատար անձինք եւ հավատացյալ ժողովուրդը:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վրդ. Հակոբյանը, Նշանակումից ի վեր, մեծ հետետողականությամբ իր ուշադրությունը սեւեռեց թե՛ խոնարված եւ թե՛ վերակառուցվող եկեղեցիներին, եւ նրա աշխատանքի շնորհիվ թեմում վերածվեցին եւ օծվեցին բազմաթիվ եկեղեցիներ եւ շուտով կվերաբացվեն եկեղեցիներ, որոնք վերանորոգության փուլում են: Նա կարողացավ միաբանել թեմի կարող մարդկանց եւ նրանց հնարավորություններն օգտագործել ի նպաստ եկեղեցու եւ հավատավոր ժողովրդի, ինչը նախկինում թվում էր խիստ անհույս ու անհեռանկարային: Եվ ահա նրա աշխատանքի շնորհիվ հունիսի 29-ին տեղի ունեցավ Քաջարանի տարածաշրջանի Քաջարանց գյուղի Աբ Հակոբ եկեղեցու վերածումը:

Կոմունիստական անաստված կարգերի հաստատումից հետո եկեղեցին վերածվել էր «մշակույթի օջախի»՝ ակումբի, որտեղ կազմակերպվում էին երգի ու պարի խմբերի ելույթներ եւ կինոդիտումներ: Շնորհիվ համագյուղացի բարերարների, ինչպես նաեւ համայնքի անդամների հանգանակության եւ ՀՊՄԿ ՓԲԸ-ի աջակցության՝ մոխիրներից վերստին հանձնեց Աբ Հակոբ եկեղեցին:

Աբ Հակոբ եկեղեցու վերածությամբ մի նոր լուսավոր էջ բացվեց Քաջարանց գյուղի համար:

Սուրբ Հակոբոս Տյառնեղբոր անունը կրող այս եկեղեցին, որ կառուցվել է 17-րդ դարում, իր ճարտարապետական ձեւով եւ հատկապես բազալտե գետաքարերով կառուցված լինելու հանգամանքով եզակի է հայ ուշ միջնադարյան եկեղեցաշինության մեջ: Այն շատ հետաքրքիր է իր պահպանված կոմիսիոյա ծածկույթով: Եկեղեցին միանավ, թաղածածկ կառույց է՝ գեղեցիկ զանգակատնով, արեւելքում՝ խորանը, եւ աջ ու ձախ կողմերում՝ ավանդատները: Քաջարանցը հնուց ի վեր եղել է Սյունիքի կազմում, նրա տասներորդ գավառի՝ Ձորքի բարձրագույն գյուղերից մեկն է՝ Կապուտջուղ լեռան արեւելակողմ ստորոտին: Ձորքը զբաղեցնում էր Ողջի գետի վերին հոսանքը եւ Գեղվա ձորը ներառյալ: Քաջարանցի տարածքից հայտնաբերվել են Ն. Զ. 15-13-րդ դդ. թվագրվող բրոնզյա սակր, բրոնզյա զարդեղեն, նետասլաքներ, գեղարդներ եւ այլն:

Ս. հանգադյանի «Հայրենապատում» շարքի առաջին հատորում կարդում ենք. «Ողջու կիրճով ո՛չ Պոմպեոսի բանակն է կարողացել անցնել, ո՛չ էլ Շապուհի արքային»: Իսկ մեծն Նժդեհը գրում է. «Մեզնից առաջ այս լեռների վրա կռվող հայը խորապես գիտակցել է, թե Սյունիքը թշնամուն հանձնելը նշանակում է հայ երկրի բանալիներն ու հայ ժողովրդի բախտը մեկընդմիջտ հանձնել իր իսկում հարեաններին: Նույն փրկարար գիտակցությամբ այս բարձունքների վրա պետք է կռվի, մեռնի ու հաղթի եւ վաղվա՝ հայրությունը: Մոռացե՛լ եք Հայ ցեղի հավիտենագիր հրամանը. հաղթե՛լ կամ մեռնե՛լ»: Քաջարանցում (Զչանաց), 1897 թ. աշխարհագրի տվյալներով, ապրում էր 30 ընտանիք, յուրաքանչյուրը՝ 8-10 շնչով: Թուրքաբնակ Շաբաղիսում, որը միջնադարյան Շիվդի-

նանց հայկական գյուղի տեղում էր, երեք անգամ ավելի շատ մարդ էր ապրում: Մեր ձակայքում էին նաեւ թուրքաբնակ Աթլըզ (Աթուր), Օխչի (Ողջի), Փիրդավդան (Աբ Դավիթ) գյուղերը, որոնք հայերի դեմ գործելիս միաբանվում էին:

Մի դրվագ գյուղի հերոսական անցյալից:

1906 թ. օգոստոսի 8-ի ուշ երեկոյան հարեան թուրքական գյուղից մի թուրք՝ Ալավերդի անունով, թանձր խավարը ճեղքելով եւ իր վախը հաղթահարելով, հասավ Քաջարանց եւ հարեան թուրքաբնակ գյուղերի դավադիր ծրագրի բոլոր հասցրեց տանտներ Նավասարդին, որը հեղինակություն էր միմյանց հարեան հայ եւ թուրք բնակչության շրջանում: Բարեսիրտ ու երախտագետ գուժկանը հայտնում է. «Ասում են՝ վերեներից հրամայել են, որ Չանգեզուրն ու Բագրուշատը պետք է մաքրել հայերից՝ սպանելով կամ տեղահան անելով բնակչությանը, ինչպես դա իրականացվել էր Օրդուբադի մոտ գտնվող հայկական Վանանդ գյուղում՝ մի քանի ժամում կոտորելով ողջ բնակչությանը»: Տանտները շտապում է գյուղի հոգեւոր հովիտ՝ տեր Հովհաննեսի մոտ: Առանց խուճապի մատնվելու՝ գյուղի առաջնորդները ձեռնամուխ են լինում ինքնապաշտպանական միջոցառումների, քննարկվում են արտաքին օժանդակություն ստանալու բոլոր հնարավոր տարբերակները: Սուրհանդակ են ուղարկում Զորիկանց, իսկ իրենք, ապավինելով Աստծուն, պատասպարվում են գյուղի Աբ Հակոբ եկեղեցում, որն այնպես էր կառուցված, որ ներսում՝ հյուսիսից ու արեւմուտքից, թաքստոցներ ունեն, որտեղից կարելի էր կրակել: Տեր Հովհաննեսն աղոթում ու քարոզ էր կարդում, հորդորում, որ խուճապի չմատնվեն: Տանտները

ցարական բանակում ծառայած եւ դիպուկահարի համբավ ունեցող Թեաթրոսին հանձնարարեց դիրք գրավել թաքստոցում, եւ հենց նրա գնդակից էլ ընկավ եկեղեցում ծվարած մարդկանց վառած հարդի ծխով խեղդել փորձող թուրքը: Թուրքերն ասպատակեցին անպաշտպան մնացած գյուղը, բռնեցին անասուններին, վառեցին խոտով ու դարմանով լի մարագները: Նրանք շատ վայրագություններ գործեցին շրջակայքի անտեղյակ անցորդ հայերի նկատմամբ, որպեսզի կոտորեն գյուղացիների ոգին: Միայն հաջորդ օրվա լուսադեմին հասավ օգնությունը՝ Մեղրու Կալեր գյուղի հայդուկապետ Եսողը՝ իր խմբով եւ Զորիկանց եւ Վերին Հանդ գյուղերից ստացած համալրումով: Այդ օրն էլ, ինչպես այլ կռիվներում, ճշտիվ կատարվում է խմբապետի հրամանը. մեկ փամփուշտ՝ մեկ թուրք: Թեաթրոսը դիպուկ կրակոցով սպանում է հարձակման կազմակերպիչ Սարու յուզբաշուն, որի արդյունքում թուրքերը խուճապահար նահանջում են: Եսող Կալերեցին հրամայում է հայտնաբերել շրջակա թուրքաբնակ գյուղերի զինայլներին եւ ոչնչացնել: Մինչեւ հակամարտության ելքը Քաջարանցի ժողովուրդը քառասուն օրով տարաբնակեցվում է Զորիկանց եւ Վերին Հանդ գյուղերում: Ցարական իշխանության միջնորդությամբ կնքվում է հաշտության պայմանագիր: Տրամադրված դրամական օժանդակությամբ քաջարանցիները վերականգնում են գյուղը եւ հարաբերական խաղաղ պայմաններում ապրում մինչեւ 1918-20 թթ. հայ-թուրքական հերթական կռիվները: 1926-27 թթ., երբ հայերին զգուշացրած Ալավերդին Նախիջեւանի կողմից գալիս է Քաջարան, գյուղացիները նյութական եւ բարոյական օժանդակության ու մեծ պատվի են արժանացնում իրենց փրկարարին:


Այսօր քաջարանցի հերոս հայորդին արժանին է հատուցում իրեն պատսպարած ու պաշտպանած սրբավայրին՝ վերականգնելով նրա խոնարված վեհությունը: Եկեղեցու վերածումից հետո հայր սուրբն իր օրհնության խոսքն ու բարեմաղթանքը հղեց ներկաներին, շեշտեց եկեղեցու կարեւորությունը մեր ազգային կյանքում, գյուղացիներին մաղթեց զորավոր հավատը ու անկոտրում կամք, որով սպառնալիքա՝ կարող լինեն ապրել՝ որպես քրիստոնյա զավակներ, եւ հավատարիմ մնան մեր՝ հավատով լեցուն նահատակ հայրերի արյան կանչին, նրանց դավանանքին ու սրբազան ուխտին, Աբ Հակոբ բարեխոսությունը խնդրեց ներկա ժողովրդի, բարերարների, համագյուղացիների եւ հայ ժողովրդի համար:

*Սիարոն քին. ՄԵԼՆՈՒՅԱՆ
«Սյունյաց Կանթեղ»
թերթի գլխավոր խմբագիր,
Քաջարանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ*

Հայ ժողովրդի դասկերումը օսարագգի ճանադարհորդների եւ միսիոներների գրվածքներում

Սկիզբը՝ էջ 7

Վիլյամ Գուդելի ասածի մեջ, անշուշտ, որոշակի ճշմարտություն կա: Պատմությունից լավ հայտնի է, որ հեթանոս ազգերը շատ հաճախ չէին փայլում իրենց բարոյական նկարագրով: Հեթանոս հայերից բացի, որպես ցայտուն օրինակ, կարելի է բերել հին հռոմեացիներին, որոնք թեեւ քաղաքակիրթ ու առաջադեմ էին համարվում, սակայն հաճախ վեհ բարոյական արժեքներով չէին առաջնորդվում: Բարձր բարոյական նկարագրով առանձնապես աչքի չէին ընկնում նաեւ հին ասորիները: Այս ցանկը դեռ երկար կարելի է շարունակել, բայց առանց դրա էլ հասկանալի է, որ բարոյական սկզբունքների պակասությունը կամ էլ դրանց լիակատար բացակայությունը բնավ արտառոց երեւոյթ չէր հեթանոսական աշխարհում: Իսկ ինչ վերաբերում է անբարոյականության հետեւանքներին, ապա նշենք, որ դրանք շատ հաճախ



կարող են ճակատագրական լինել: Դա մի հզոր գեղեցիկ է, որն ունակ է նույնիսկ կայսրություններ փլուզելու, իսկ ազգերին՝ հասցնելու ինքնադժգոյս: Ահա թե ինչո՞ւ անհրաժեշտություն առա-

ջացավ ստեղծելու մի նոր, ավելի առաջադեմ կրոն, որը հնարավորություն կընձեռեր բարոյական փոփոխություններ մարդկանց եւ ամբողջ ազգերի, հանել մարդկային հասարակությունը բարո-

յազրկության քաոսից եւ այսպիսով երաշխավորել մոլորյալ ազգերի հետագա բնականոն գոյությունն ու ժողովուրդների խաղաղ համակեցությունը:

Հայերի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում գերմանացի սպա եւ Ռուսաստանում Գերմանիայի դեսպանատան քարտուղար բարոն Մաքս ֆոն Թելմանը «Ճանապարհորդություն դեպի Կովկաս, Պարսկաստան եւ Թուրքիա» գրքում (Thielman M., Journey in the Caucasus, Persia and Turkey, John Murray, London, 1875): Նշենք, որ գիրքը նվիրված չէ միայն հայ ժողովրդին. գերմանացի սպան գրում է Կովկասի, Թուրքիայի եւ Պարսկաստանի ժողովուրդների, Կովկասում ծավալված ռազմական գործողությունների, վերջիններիս մեջ ներգրավված ցեղերի, ռուսների հետ ունեցած նրանց հարաբերությունների մասին: Սակայն մեզ հիմնականում հետաքրքրում

է այն, թե ինչպես է գերմանացի դիվանագետը բնութագրում հայ ժողովրդին:

*Շարունակելի
Տիգրան ՍԱԼՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու*

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին
Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստուծոյ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Եջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 17.7.2013 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ